ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«01» նոյեմբերի 2019 թվականի №550-Ա քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 3-Ի № 172-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 3-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետի 2019 թվականի հուլիսի 11-ի № 860/19 գրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի հունիսի 3-ի «ՈՒԺԵՂ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի գործողությունների պլանը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի օգոստոսի 28-ի № 236-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №172-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) Որոշմամբ հաստատված №1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն №1 հավելվածի:

2) Հաստատել ինժեներական տեխնիկայի, բժշկական ուժերի, փրկարարական և վթարավերականգնողական ուժերի ու միջոցների հաշվարկը՝ համաձայն №2 հավելվածի և Որոշման 1-ին կետը 17-րդ ենթակետից հետո լրացնել 18-րդ ենթակետով՝ «18) Ինժեներական տեխնիկայի, բժշկական ուժերի, փրկարարական և վթարավերականգնողական ուժերի ու միջոցների հաշվարկը համաձայն №18 հավելվածի:»:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված № 1
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2019 թվականի նոյեմբերի 01-ի № 550-Ա որոշման

«Հավելված № 1
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2016 թվականի հունիսի 3-ի № 172-Ա որոշման

ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

ԲԱԺԻՆ 1

Ի.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության պաշտպանության կազմակերպման պլանը (այսուհետ՝ պլան) սահմանում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և փրկարար ուժերի խնդիրները, գործողություններն ու դրանց իրականացման կարգը:

2. Պլանում օգտագործված հիմնական հասկացություններն են՝

1) **ուժեղ երկրաշարժ**՝ երկրաշարժ, որի ուժն ըստ մագնիտուդի՝ 5,5-ից բարձր է.

2) **բնակչության պաշտպանություն**՝ արտակարգ իրավիճակներում մարդկանց կյանքի և առողջության պաշտպանության, ինչպես նաև քաղաքացիների, պետության և այլ սեփականատերերի ունեցվածքի պահպանության նպատակով իրավական, կազմակերպչական և ինժեներատեխնիկական միջոցառումներ.

3) **շենքերի և շինությունների խոցելիության գնահատում**՝ շենքերի և շինությունների վարքի կանխատեսում ուժեղ երկրաշարժի դեպքում.

4) **փրկարար ուժեր**՝ փրկարարական աշխատանքներ կատարելու համար նախատեսված համապատասխան տեխնիկական հագեցվածությամբ, մասնագիտացված փրկարարներից բաղկացած կազմավորումներ.

5) **հատուկ, կարևորագույն նշանակություն ունեցող օբյեկտներ**՝ պետական և ռազմավարական նշանակություն, բարձր վտանգավորություն ունեցող ու բնակչության կենսագործունեությունն ապահովող օբյեկտներ.

6) **աղետի գոտի**՝ արտակարգ իրավիճակների հետևանքով տուժած տարածք (բնակավայր, օբյեկտ) կամ տարածքի մի մաս.

7) **փրկարարական աշխատանքներ՝** մարդկանց, նյութական և մշակութային արժեքների փրկության նպատակով իրականացվող միջոցառումների համալիր.

8) **անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ՝** առաջնահերթ աշխատանքներ ուղղված մարդկանց կյանքին և առողջությանն սպառնացող այնպիսի գործոնների ազդեցության վտանգի վերացմանը, որոնք խոչընդոտում են մարդկանց որոնելուն և փրկելուն, ինչպես նաև շենքերի, շինությունների ամրացմանը կամ փլուզմանը, հեղուկ վառելիքի, գազի, էլեկտրաէներգիայի և ջրի աղբյուրների վթարային անջատմանը, բնակչության ու փրկարարների կենսաապահովման առաջնահերթ օբյեկտների ժամանակավոր սխեմաներով վերականգնմանը, վերանորոգմանը և տարածքի սանիտարական մաքրմանը.

9) **տարահանում՝** վտանգավոր տարածքից անվտանգ տարածք՝ մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների ժամանակավոր տեղափոխում ու տեղաբաշխում.

10) **տարահանման հանձնաժողով՝** համապատասխան ղեկավարի որոշմամբ ստեղծված աշխատանքային խումբ, որը կազմակերպում ու ղեկավարվում է տվյալ տարածքի բնակչության և կազմակերպությունների տարահանման միջոցառումները.

11) **վտանգավոր տարածք՝** տեղանք կամ առանձին բնակավայր, օբյեկտ, որտեղ արտակարգ իրավիճակի հետևանքով առաջացել կամ կարող են առաջանալ մարդկանց կյանքի, առողջության և բնականոն կենսագործունեության վրա բացասաբար ազդող գործոններ:

3. Պլանում ներգրավվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի հետևյալ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինները և կազմակերպությունները՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանը.

ա. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունը,

բ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչությունը,

գ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունը,

դ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությունը,

ե. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչութունը,

2) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչությունը.

3) Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության Շիրակի մարզային վարչությունը.

4) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Շիրակի զինվորական կայազորը.

5) Հայաստանի Հանրապետության ոստիկանության Շիրակի մարզային վարչությունը.

6) «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության «Արևմուտք» տարածաշրջանի տնօրինության «Շիրակ» տեղամասը.

7) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Ղարս» մասնաճյուղը.

8) «Արմենիա միջազգային օդանավակայան» փակ բաժնետիրական ընկերության «Շիրակ» օդանավակայանը.

9) Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հյուսիսային տարածքային կենտրոնը.

10) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Շիրակ» մասնաճյուղը.

11) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Հիդրոմետ» ծառայության Ախուրյանի գետավազանի ջրաբանական կայանը իր թվով 5 հիդրոլոգիական դիտակետերով՝ Ամասիայի, Ախուրիկի, Կարկաչուն–Ղարիբջանյան, Իլլի գետ– Ջրաձոր և Կրասար.

12) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային հեռուստառադիոընկերությունները.

13) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության տարահանման հանձնաժողովը.

14) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության հյուսիսային տարածաշրջանային կենտրոնը.

15) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տեղական ինքնակառավարման մարմինները:

4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում ուժեղ երկրաշարժի և դրա անմիջական սպառնալիքի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթները ուժեղ երկրաշարժից առաջ և հետո՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի գործառույթներն են երկրաշարժից առաջ՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպման պլանի մշակումը,

բ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման նպատակով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի համապատասխան որոշմամբ բնակչության տարահանման հանձնաժողովի և տարահանման հանձնաժողովի աշխատանքային խմբերի ստեղծումը,

գ. տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և բնակչության ուսուցման կազմակերպումը,

դ. կառավարման, կապի և ազդարարման համակարգերի ստեղծումը:

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի գործառույթներն են երկրաշարժից հետո՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների ու տարահանման պլանների ճշգրտումը և պլաններով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. մարզային պլաններով և ծրագրերով նախատեսված բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը,

գ. տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և բնակչության ներգրավումը բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման գործում,

դ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանումը,

ե. կառավարման, կապի և ազդարարման համակարգերի նախապատրաստման ու գործունեության աշխատանքների կազմակերպումը,

զ. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Շիրակի զինվորական կայազորի հետ համատեղ մայրուղիների և ճանապարհների օգտագործման կարգի ճշտումը,

է. տարահանման հանձնաժողովների գործունեության նախապատրաստումը,

ը. բնակչության պաշտպանության միջոցառումների համար նախատեսված տրանսպորտային միջոցների նախապատրաստումը,

թ. բնակչության պաշտպանության հետախուզական, ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի կազմակերպությունների նախապատրաստումը,

ժ. բնակչության զանգվածային պատվաստման նախապատրաստումը՝ համաճարակաբանական մարմինների ցուցումներին համապատասխան,

ժա. հատուկ, կարևորագույն նշանակություն ունեցող օբյեկտների պահպանության ուժեղացման նախապատրաստումը,

ժբ. կազմակերպություններում հակահրդեհային միջոցառումների նախապատրաստումը,

ժգ. գյուղատնտեսական կենդանիների և բույսերի պահպանության միջոցառումների ժամանակացույցների ճշգրտումը,

ժդ. արտակարգ իրավիճակների պայմաններում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության վարվելակերպի, բնակչության կողմից անհատական պաշտպանության պարզագույն միջոցների պատրաստման ուսուցման կազմակերպումը,

ժե. տուժած բնակչությանը ժամանակավոր կացարաններով ապահովումը,

ժզ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

3) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության գործառույթներն են երկրաշարժից առաջ՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում մարզի բնակչության պաշտպանության կազմակերպման պլանի մշակումը համատեղ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի հետ,

բ. փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման նպատակով՝ համայնքներում, կազմակերպություններում համապատասխան կազմավորումների ստեղծում, անձնակազմերի ուսուցում մարզում անցկացվող շտաբային ոսումնավարժությունների միջոցով,

գ. կապի և ազդարարման կենտրոնացված համակարգերի ստեղծման ուղղությամբ աշխատանքների կազմակերպումը,

դ. ճառագայթային, քիմիական և մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի կազմակերպությունների աշխատանքի ապահովման կազմակերպումը:

4) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության գործառույթներն են երկրաշարժից հետո՝

ա. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին պլանը ամբողջությամբ կամ մասամբ գործողության մեջ դնելու վերաբերյալ առաջարկություն ներկայացնելը,

բ. պլանով նախատեսված միջոցառումների իրականացման կազմակերպումը,

գ. փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումը, համակարգումը և իրականացումը,

դ. իր ենթակայության ստորաբաժանումների կայուն գործունեության կազմակերպումը,

ե. բնակչության ազդարարումը և իրազեկումը,

զ. կառավարման, կապի և ազդարարման համակարգերի նախապատրաստման և կայուն գործունեության աշխատանքների կազմակերպումը,

է. երկրաշարժից տուժած տարածքի հետախուզության կազմակերպումը և համակարգումը,

ը. պլանում ներգրավված մարմինների հետ համագործակցության իրականացումը՝ բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպման և կատարման համար,

թ. բնակչության պաշտպանության հարցերով պետական կառավարման տարածքային ու տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեության համակարգումը,

ժ. երկրաշարժի հետևանքով տուժածներին օգնություն ցուցաբերելու նպատակով ֆինանսական, պարենային, բժշկական և այլ նյութական պաշարների, ֆոնդերի նախապես ստեղծման համար առաջարկությունների մշակումը և դրանք Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն ներկայացնելը, ինչպես նաև դրանց կուտակման և հետագա նպատակային օգտագործման հարցերի կարգավորումը,

ժա. օդի որակի դիտակետերի շուրջօրյա աշխատանքի ապահովման կազմակերպումը,

ժբ. հակահրդեհային անվտանգության ապահովումը,

ժգ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

5) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գործառույթներն են երկրաշարժից առաջ՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի մշակումը,

բ. մարզային ենթակայության առողջապահական հաստատություններում ուսումնավարժությունների կազմակերպումը և անցկացումը,

գ. անձնակազմերի նախապատրաստումը արտակարգ իրավիճակներում աշխատելու համար,

դ. արտաքաղաքային տարածքներում անհրաժեշտության դեպքում բժշկական կազմակերպությունների արագ ծավալման նպատակներով, անհրաժեշտ սարքավորումների և դեղորայքի պահեստավորումը,

ե. բնակչության շրջանում անվերադարձ կորուստների հաշվառման և դիակների հուղարկավորման աշխատանքների կազմակերպման նպատակով անհրաժեշտ միջոցների կուտակումը.

6) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գործառույթներն են երկրաշարժից հետո՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. համակարգի աշխատողների պաշտպանության կազմակերպումը,

գ. առողջապահական հաստատությունների կայուն գործունեության կազմակերպումը,

դ. տուժած բնակչությանը և հիվանդներին ժամանակին անհրաժեշտ բժշկական օգնության ցուցաբերումը, նրանց տարահանումը բժշկական հաստատություններ և հետագա բուժման կազմակերպումը,

ե. ընդհանուր և մասնագիտացված բժշկական հաստատությունների ցանցի պատրաստության բերումն ու համալրումն անհրաժեշտ բժշկասանիտարական գույքով և դեղորայքով,

զ. երկրաշարժից տուժած տարածքներում սանիտարահամաճարակաբանական միջոցառումների իրականացումը,

է. բնակչության զանգվածային պատվաստման համար աշխատանքների իրականացումը,

ը. հակահամաճարակային դիտարկման և լաբորատոր հսկողության կազմակերպումը ջրի նկատմամբ, ինչպես նաև աջակցությունն արտաքին միջավայրի և սննդի նկատմամբ իրականացվող դիտարկմանն ու լաբորատոր հսկողությանը,

թ. կազմավորումների և բուժհիմնարկների՝ անհրաժեշտ բժշկական գույքով և դեղորայքով ապահովումը,

ժ. տարահանման միջոցառումների բժշկական ապահովումը,

ժա. մասնակցությունը տարահանված բնակչության կենսաապահովման աշխատանքներին,

ժբ. անհրաժեշտության դեպքում սննդամթերքի, ինչպես նաև որպես մարդասիրական օգնություն ներկրվող բեռների որակի և պիտանելիության նկատմամբ հսկողությանն աջակցությունը,

ժգ. բնակչության շրջանում անվերադարձ կորուստների հաշվառումը և դիակների հուղարկավորման աշխատանքների կազմակերպումը.

ժդ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

7) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության գործառույթներն են երկրաշարժից առաջ՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի մշակում,

բ. անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման նպատակով՝ ենթակա կազմակերպություններում համապատասխան կազմավորումների ստեղծումը, անձնակազմերի ուսուցումը,

գ. հետևողական հսկողության իրականացումը մարզում ենթակառուցվածքների, նախագծվող վտանգավոր ձեռնարկությունների կառուցման ընթացքում շինարարական նորմերի պահպանման ուղղությամբ,

դ. մարզի վթարային շենքերի ժամանակին հաշվառումը, ամրացման, քանդման նպատակով առաջարկությունների ներկայացումը,

ե. վառելիքաքսուկային նյութեր ներկրող, պահեստավորող ընկերությունների, կազմակերպությունների հետ անհրաժեշտ պայմանագրերի կնքումը,

զ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը,

8) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության գործառույթներն են երկրաշարժից հետո՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. բնակչության պաշտպանության միջոցառումների ինժեներական ապահովման աշխատանքների կազմակերպումը և իրականացումը,

գ. վթարված ինժեներական կառույցների գնահատումը և վերականգնման կազմակերպումը,

դ. մասնակցությունը հատուկ հետախուզության իրականացմանը,

ե. ճանապարհների վնասված և փլուզվածքներով խցանված հատվածներով ու կամուրջներով անցանելիության ապահովումը,

զ. բնակչության տարահանման միջոցառումների, հիվանդների ու տուժածների, փրկարարական ուժերի նյութատեխնիկական միջոցների տեղափոխման և բնակչության պաշտպանության այլ միջոցառումների տրանսպորտային ապահովումը,

է. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

9) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գործառույթներն են երկրաշարժից առաջ՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի մշակում,

բ. հնարավոր անկած գյուղատնտեսական կենդանիների հուղարկավորության համար անասնագերեզմանոցների նախնական ընտրության կատարումը,

գ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը,

10) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գործառույթներն են երկրաշարժից հետո՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. տուժած տարածքներից գյուղատնտեսական կենդանիների, գյուղատնտեսական արտադրանքի դուրսբերման աշխատանքների կազմակերպումը,

գ. գյուղատնտեսական հումքի, սարքավորումների և պարենի, այլ նյութական միջոցների պաշարների ստեղծումն ու պահպանումը,

դ. փրկարարական շների օգնությամբ անհրաժեշտ բժշկական օգնության կազմակերպումը,

ե. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

11) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության գործառույթներն են երկրաշարժից առաջ՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի մշակումը,

բ. արտակարգ իրավիճակներում հատուկ նշանակություն ունեցող, այլ ապրանքներ արտադրող և ներմուծող կազմակերպությունների ու անհատ ձեռներեցների հետ նախօրոք անհրաժեշտ պայմանագրերի կնքումը,

գ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

12) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության գործառույթներն են երկրաշարժից հետո՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. արտակարգ իրավիճակներում հատուկ նշանակություն ունեցող, այլ ապրանքներ արտադրող և ներմուծող կազմակերպությունների ու անհատ ձեռներեցների հետ նախօրոք կնքված պայմանագրերի համաձայն անհրաժեշտ գնումների իրականացումը,

գ. պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ համատեղ տուժած բնակչության և կազմավորումների անձնակազմերի՝ սննդամթերքով, առաջին անհրաժեշտության ապրանքներով և նյութատեխնիկական միջոցներով ապահովումը,

դ. արտակարգ իրավիճակի պայմաններում տնտեսության կայուն աշխատանքի ապահովումը,

ե. բնակչության կենսաապահովումը,

զ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

13) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչութան գործառույթներն են երկրաշարժից առաջ՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի մշակումը,

բ. մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում համատեղ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության հետ ուսումնավարժությունների կազմակերպումը և անցկացումը,

գ. տարահանման հավաքակայաններում վարժանքների կազմակերպումը և անցկացումը,

դ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

14) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գործառույթներն են երկրաշարժից հետո՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների կայուն գործունեության կազմակերպումը,

գ. տուժած բնակավայրերի հանրակրթական դպրոցներից և այլ ուսումնական հաստատություններից մարդկանց տարահանումը,

դ. մշակութային արժեքների պահպանման և տարահանման միջոցառումների կազմակերպումը,

ե. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

15) Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության Շիրակի մարզային վարչության գործառույթներն են երկրաշարժից առաջ՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի մշակումը,

բ. իր ենթակայության ստորաբաժանումներում ուսումնական վարժանքների անցկացումը արտակարգ իրավիճակներում գործողությունների կազմակերպումը թեմաներով,

գ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավական ակտերով իրեն վերապահված լիազորությունների իրականացումը.

16) Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության Շիրակի մարզային վարչության գործառույթներն են երկրաշարժից հետո՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. համակարգի աշխատողների պաշտպանության կազմակերպումը,

գ. իր ենթակայության ստորաբաժանումների կայուն գործունեության կազմակերպումը,

դ. իր իրավասության սահմաններում պահպանվող օբյեկտների պահպանության ուժեղացումը,

ե. ժամանած միջազգային ուժերի նկատմամբ հսկողության իրականացումը,

զ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավական ակտերով իրեն վերապահված լիազորությունների իրականացումը.

17) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Շիրակի զինվորական կայազորի գործառույթներն են երկրաշարժից առաջ՝

ա. բնական աղետների և տեխնածին վթարների առաջացման սպառնալիքի ու արտակարգ իրավիճակների դեպքում Հայաստանի Հանրապետության արտակարգ

իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Շիրակի զինվորական կայազորի համագործակցության պլանի մշակումը,

բ. իր ենթակայության ստորաբաժանումներում ուսումնական վարժանքների անցկացումը արտակարգ իրավիճակներում գործողությունների կազմակերպումը թեմաներով,

գ.. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավական ակտերով իրեն վերապահված լիազորությունների իրականացումը.

18) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Շիրակի զինվորական կայազորի գործառույթներն են երկրաշարժից հետո՝

ա. բնական աղետների և տեխնածին վթարների առաջացման սպառնալիքի ու արտակարգ իրավիճակների դեպքում Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Շիրակի զինվորական կայազորի համագործակցության պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված գործողությունների իրականացումը,

բ. համակարգի ծառայողների պաշտպանության կազմակերպումը,

գ. իր ենթակայության ստորաբաժանումների կայուն գործունեության կազմակերպումը,

դ. ճանապարհների վնասված և փլուզվածքներով խցանված հատվածներով ու կամուրջներով անցանելիության ապահովումը,

ե. փրկարարական աշխատանքների իրականացման համար ուժերի ու միջոցների տրամադրումը և փրկարարական աշխատանքներին մասնակցությունը,

զ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

19) Հայաստանի Հանրապետության ոստիկանության Շիրակի մարզային վարչության գործառույթներն են երկրաշարժից առաջ՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների և փոխգործողությունների պլանների մշակումը,

բ. իր ենթակայության ստորաբաժանումներում ոսումնական վարժանքների անցկացումը արտակարգ իրավիճակներում գործողությունների կազմակերպումը թեմաներով,

գ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավական ակտերով իրեն վերապահված լիազորությունների իրականացումը.

20) Հայաստանի Հանրապետության ոստիկանության Շիրակի մարզային վարչության գործառույթներն են երկրաշարժից հետո՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. համակարգի աշխատողների պաշտպանության կազմակերպումը,

գ. իր ենթակայության ստորաբաժանումների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հիմնարկների կայուն գործունեության կազմակերպումը,

դ. արտակարգ իրավիճակում համայնքներում, պաշտպանական, տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող, ինչպես նաև բնակչության պաշտպանության տեսանկյունից բարձր վտանգավորություն ներկայացնող կազմակերպություններում, պահպանվող օբյեկտներում, բնակչության տարահանման հավաքակայաններում և տեղաբաշխման վայրերում, փրկարարական ուժերի և միջոցների շարժման երթուղիներում հասարակական կարգի պահպանության կազմակերպումն ու ապահովումը,

ե. պետական սեփականության, բնակչության ունեցվածքի պահպանության կազմակերպումը և իրականացումը,

զ. մասնակցությունը բնակչության ազդարարմանը և իրազեկմանը,

է. աղետի գոտում անցագրային ռեժիմի և պարետային ծառայության կազմակերպումն ու իրականացումը,

ը. մարզի ռազմավարական նշանակություն ունեցող և կենսաապահովման կարևորագույն օբյեկտների պահպանության ուժեղացումը,

թ. ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովումը,

ժ. աղետի հետևանքների վերացման գործում ներգրավված ուժերի և տարահանման անխափան երթևեկության ապահովումը,

ժա. մահացածների հաշվառմանը աջակցությունը,

ժբ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

21) «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության «Արևմուտք» տարածաշրջանի տնօրինության «Շիրակ» տեղամասը գործառույթներն են երկրաշարժից առաջ՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի մշակումը,

բ. իր ենթակայության ստորաբաժանումներում ուսումնական վարժանքների անցկացումը արտակարգ իրավիճակներում գործողությունների կազմակերպումը թեմաներով,

գ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավական ակտերով իրեն վերապահված լիազորությունների իրականացումը.

22) «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության «Արևմուտք» տարածաշրջանի տնօրինության «Շիրակ» տեղամասի գործառույթներն են երկրաշարժից հետո՝

ա. տարահանման պլանների ճշգրտումը և պլաններով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. իր ենթակայության ստորաբաժանումների և օբյեկտների կայուն գործունեության կազմակերպումը,

գ. ջրային ռեսուրսների և համակարգերի պաշտպանական միջոցառումների իրականացման ապահովումը,

դ. պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ բնակչության և փրկարարական կազմավորումների անձնակազմի՝ ջրով ապահովումը,

ե. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

23) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Ղարս» մասնաճյուղի գործառույթներն են երկրաշարժից առաջ՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի մշակումը,

բ. իր ենթակայության ստորաբաժանումներում ուսումնական վարժանքների անցկացումը արտակարգ իրավիճակներում գործողությունների կազմակերպումը թեմաներով,

գ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավական ակտերով իրեն վերապահված լիազորությունների իրականացումը.

24) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Ղարս» մասնաճյուղի գործառույթներն են երկրաշարժից հետո՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. իր ենթակայության ստորաբաժանումների կայուն գործունեության կազմակերպումը,

գ. էներգահամակարգի գործունեության կայունության ապահովումը,

դ. էներգահամակարգի անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման կազմակերպումը,

ե. տուժած տարածքների էներգամատակարարման վերականգնումը, աշխատանքային տեղամասերում, առանձին հատվածներում դրանց դադարեցումը կամ վերաթողարկումը,

զ. մասնակցությունը տարահանված բնակչության կենսաապահովման գործին,

է. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

25) «Արմենիա միջազգային օդանավակայան» փակ բաժնետիրական ընկերության «Շիրակ» օդանավակայանի գործառույթներն են երկրաշարժից առաջ՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի մշակումը,

բ. իր ենթակայության ծառայություններում ուսումնական վարժանքների անցկացումը արտակարգ իրավիճակներում գործողությունների կազմակերպումը թեմաներով,

գ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավական ակտերով իրեն վերապահված լիազորությունների իրականացումը.

26) «Արմենիա միջազգային օդանավակայան» փակ բաժնետիրական ընկերության «Շիրակ» օդանավակայանի գործառույթներն են երկրաշարժից հետո՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. համակարգի աշխատողների և օդանավակայանում գտնվող ուղևորների պաշտպանության կազմակերպումը,

գ. իր ենթակայության ծառայությունների կայուն գործունեության կազմակերպումը,

դ. օդանավակայանի տարածքի շինությունների և օբյեկտների պաշտպանության, փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը,

ե. մարդասիրական օգնության ստացման, բեռնաթափման և այլ պետություններից ժամանած փրկարարական ուժերի ընդունման ապահովումը,

զ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

27) Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հյուսիսային տարածքային կենտրոնի գործառույթներն են երկրաշարժից առաջ՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի մշակումը,

բ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավական ակտերով իրեն վերապահված լիազորությունների իրականացումը.

28) Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հյուսիսային տարածքային կենտրոնի գործառույթներն են երկրաշարժից հետո՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. տարահանված բնակչության ընդունման կետերում և տեղաբաշխման վայրերում սանիտարահիգիենիկ իրավիճակի մշտական հսկողությունն իրականացումը,

գ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

29) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն «Շիրակ» մասնաճյուղի գործառույթներն են երկրաշարժից առաջ՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի մշակումը,

բ. իր ենթակայության բաժիններում ուսումնական վարժանքների անցկացումը արտակարգ իրավիճակներում գործողությունների կազմակերպումը թեմաներով,

գ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավական ակտերով իրեն վերապահված լիազորությունների իրականացումը.

30) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն «Շիրակ» մասնաճյուղի գործառույթներն են երկրաշարժից հետո՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. իր ենթակայության բաժինների կայուն գործունեության կազմակերպումը,

գ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում օդի, ջրային տարածքների, հողի, սննդամթերքի ճառագայթաակտիվ նյութերով վարակվածության աստիճանի որոշումը (մոնիթորինգի իրականացումը),

դ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը..

31) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպութուն «Հիդրոմետ ծառայություն» Ախուրյանի գետավազանի ջրաբանական կայանի և իր թվով 5 հիդրոլոգիական դիտակետերի՝ Ամասիայի, Ախուրիկի, Կարկաչուն-Ղարիբջանյան, Իլլի գետ- Ջրաձոր և Կրասար գործառույթներն են երկրաշարժից առաջ՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի մշակումը,

բ. իր ենթակայության հիդրոլոգիական դիտակետերում ուսումնական վարժանքների անցկացումը արտակարգ իրավիճակներում գործողությունների կազմակերպումը թեմաներով,

գ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավական ակտերով իրեն վերապահված լիազորությունների իրականացումը.

32) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Հիդրոմետ ծառայություն» Ախուրյանի գետավազանի ջրաբանական կայանի և իր թվով 5 հիդրոլոգիական դիտակետերի՝ Ամասիայի, Ախուրիկի, Կարկաչուն-Ղարիբջանյան, Իլլի գետ- Ջրաձոր և Կրասար գործառույթներն են երկրաշարժից հետո՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. իր ենթակայության հիդրոլոգիական դիտակետերում կայուն գործունեության կազմակերպումը,

գ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում օդի, ջրային տարածքների, հողի ճառագայթաակտիվ նյութերով վարակվածության հետախուզության կազմակերպումը,

դ. օդերևութաբանական իրավիճակի կանխորոշումը,

ե. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

33) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային հեռուստառադիոընկերությունների գործառույթներն են երկրաշարժից առաջ՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի մշակումը,

բ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավական ակտերով իրեն վերապահված լիազորությունների իրականացումը.

34) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային հեռուստառադիոընկերությունների գործառույթներն են երկրաշարժից հետո՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. պահուստային շարժական և շարժական արբանյակային կայանների ծավալումը և աշխատանքի կազմակերպումը,

գ. բնակչության պահելաձևի կարգի և վարքի կանոնների մասին ուսուցանումն ու իրազեկումը,

դ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը,

ե. փրկարարական աշխատանքների ընթացքի և աղետի հետևանքների վերացման վերաբերյալ հաղորդումների հեռարձակումը.

35) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության տարահանման հանձնաժողովի գործառույթներն են երկրաշարժից առաջ՝

ա. արտակարգ իրավիճակներում տարահանման պլանի մշակումը,

բ. տարահանման հանձնաժողովի աշխատանքային խմբերում վարժանքների կազմակերպումը և անցկացումը,

գ. տարահանված բնակչության ընդունման հավաքակետերի և ժամանակավոր տեղաբաշխման կետերի ստեղծումը և անձնակազմերի ուսուցումը,

դ. տարահանված բնակչության ընդունման հավաքակետերում և տեղաբաշխման կետերում վարժանքների կազմակերպումը և իրականացումը,

ե. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

36) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության տարահանման հանձնաժողովի գործառույթներն են երկրաշարժից հետո՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների ճշգրտումը և նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. իր լիազորությունների շրջանակներում տարբեր մակարդակների տարահանման հանձնաժողովների կայուն գործունեության կազմակերպումը,

գ. տուժած բնակչության՝ ժամանակավոր կացարաններով ապահովման կազմակերպումը,

դ. տարահանված բնակչության ընդունման հավաքակետերի և տեղաբաշխման վայրերի ծավալման նախապատարաստման աշխատանքների նկատմամբ հսկողության իրականացումը,

ե. տարահանված բնակչության ընդունման և տեղաբաշխման միջոցառումների կազմակերպումը և իրականացումը.

զ. տարահանված բնակչությանը տեղաբաշխելու համար նախատեսված տրասնպորտային միջոցների հատկացման աշխատանքների կազմակերպումը,

է. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

37) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության հյուսիսային տարածաշրջանային կենտրոնի գործառույթներն են երկրաշարժից առաջ՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի մշակումը,

բ. իր ենթակայության բաժիններում վարժանքների անցկացումը՝ արտակարգ իրավիճակներում միջոցառումների իրականացումը թեմաներով.

գ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի համայնքներում սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզների մշակումը:

38) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության հյուսիսային տարածաշրջանային կենտրոնի գործառույթներն են երկրաշարժից հետո՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. իր ենթակայության բաժինների կայուն գործունեության կազմակերպումը,

գ. համապատասխան մարմիններին ընթացիկ սեյսմիկ ռեժիմի, տեղի ունեցած սեյսմիկ իրադարձության (երկրաշարժի), ինչպես նաև սեյսմիկ իրավիճակի զարգացման մասին պարբերաբար տեղեկատվության տրամադրումը,

դ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

39) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթներն են երկրաշարժից առաջ՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի մշակումը,

բ. համայնքային տարահանման հանձնաժողովների ստեղծումը

գ. համայնքային ենթակայության օբյեկտներում վարժանքների անցկացումը՝ արտակարգ իրավիճակներում միջոցառումների իրականացումը թեմաներով.

դ. համայնքի բնակչության, գյուղատնտեսական կենդանիների, նյութական և մշակութային արժեքների, գյուղատնտեսական կենդանիների ու ապրանքների տարահանման և բնակչության առաջին անհրաժեշտության միջոցների պահեստավորումը,

ե. համայնքի բնակչության ազդարարման համակարգի հիմնումը,

զ. համայնքային կազմավորումների ստեղծումը և անձնակազմերի ուսուցման կազմակերպումը,

է. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը:

40) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթներն են երկրաշարժից հետո՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանների ճշգրտումը և պլաններով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. միջոցառումների իրականացումը՝ համայնքային ենթակայության օբյեկտների անվտանգ աշխատանքն ապահովելու նպատակով,

գ. համայնքի բնակչության, գյուղատնտեսական կենդանիների, նյութական և մշակութային արժեքների, գյուղատնտեսական կենդանիների ու ապրանքների տարահանման, բնակչության՝ ժամանակավոր կացարաններով և առաջին անհրաժեշտության միջոցներով ապահովումը,

դ. համայնքի բնակչության ազդարարումը,

ե. համայնքի ուժերի՝ փրկարարական աշխատանքներին մասնակցության ապահովումը,

զ. մահացածների հուղարկավորության իրականացումը,

է. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը:

II. ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԾԱԳՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևմտյան մասում, տարածքը՝ 2,681 հազ. քառակուսի կիլոմետր է: Մարզի ձգվածությունը հյուսիսից հարավ կազմում է մոտ 175 կմ, իսկ Խարկով-Սառնաղբյուր

բնակավայրերը միացնող գծից մինչև Արագած լեռնագագաթը՝ մոտ 75 կմ: Մարզի բնակչության թիվը կազմում է 297225 մարդ, որից 0-15 տարեկան երեխաներ-91972, 15 տարեկանից բարձր տղամարդիկ՝89815 մարդ, իսկ 15 տարեկանից բարձր կանայք 118419՝ մարդ:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզկենտրոնը Գյումրի քաղաքն է, որի մակերեսը կազմում է 44,44 կմ^2 , բնակչության թիվը՝ 158426 մարդ: Մարզի բնակչության գրեթե 61 %-ը բնակվում է քաղաքներում: Մարզը ունի 2 քաղաքային, 39 գյուղական համայնքներ և մեկ բազմաբնակավայր, բնակչության խտությունը 1 կմ^2 վրա կազմում է 105 մարդ:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի աշխարհագրական դիրքը երկրի ներսում ծայրամասային է: Մարզը արևմուտքում սահմանակից է Թուրքիայի Հանրապետության հետ (117կմ), հյուսիսում՝ Վրաստանի Հանրապետության հետ (66կմ), իսկ արեւելքից եւ հարավից Հայաստանի Հանրապետության Լոռու և Արագածոտնի մարզերի հետ:

6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզը ունի բարդ երկրաձևաբանական նկարագրություն: Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում հյուսիսից հարավ առանձնանում են Աշոցքի սարահարթը (1800-2200մ), Շիրակի գոգավորությունը (1400-1600մ), որոնք միմյանցից բաժանվում են Շիրակի լեռնաշղթայով: Շիրակը 3 կողմերից եզրավորում են Արագածի (4090մ), Ջավաղքի (Աչքասար գագաթը 3196մ) և Եղնախաղի (3042մ), հրաբխածին լեռնագագաթները: Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ամենացածր վայրը Ախուրյան գետի հովիտն է Անիպեմզայի մոտ 1380մ, իսկ ամենաբարձրը՝ Արագած լեռն է 4090մ:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում գերակշռում են տափաստանային լանդշաֆտների լեռնային տարբերակները:

7. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի կլիմայական պայմանները փոփոխվում են ըստ բարձրության և արտահայտվում են բարեխառն՝ երկարատև տաք ամառներով ու ցուրտ ձմեռներով:Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի կլիման, թեև ընդհանուր առմամբ բարեխառն է, բայց աչքի է ընկնում ցամաքայնությամբ և ըստ բաձրության դառնում է ավելի խիստ: Օդի միջին տարեկան ջերմաստիճանը մարզի տարածքի համար կազմում է 4,3C°: Ամենաբարձր միջին տարեկան ջերմաստիճանները դիտվում են Գյումրիում 6,2C° և Արթիկում 6,1C°, իսկ ամենացածրը՝ Աշոցքում 1,9C° և Պաղակնում 2,1C°: 2500մետր և ավելի բարձրությունների վրա դիտվում են բացասական տարեկան ջերմաստիճաններ: Բացարձակ առավելագույն ջերմաստիճանը գրանցվել է Գյումրիում 38C°, իսկ բացարձակ

նվազագույնը՝ գրանցվել է Պաղակնում (Շուռաբադ) - 42C°: Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում տարեկան տեղումների քանակը կազմում է 590մմ: Առավել չորային է Շիրակի դաշտը՝ 495մմ, իսկ Արագած լեռնավահանում՝ սկսած 3000մ-ից տարեկան տեղումները կազմում են մինչև 1000մմ: Քամու միջին տարեկան արագությունը մարզի տարածքում բաշխված է անհամաչափ՝ Գյումրիում 1,3մ/վ, Աշոցքում մինչև 3,3մ/վ, առավելագույն պոռտկումները հասնում են մինչև 30-35մ/վ: Ձյան շերտի միջին բարձրությունը կազմում է՝ Գյումրիում 40սմ, Պաղակնում 137սմ:

8. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքն աչքի է ընկնում իր բարդ լեռնային ռելիեֆով: Լեռնային ռելիեֆն ու կտրուկ մայրցամաքային կլիման նախասահմանել են մարզի տարածքում բնական վտանգների տեսակները՝ ուժեղ երկրաշարժեր, սողանքներ, փլուզումներ, սելավներ, կարկուտ, քարաթափում ուժեղ քամիներ, շանթահարում, երաշտ, հորդառատ անձրևներ: Եվ ծավալով, և դրսևորման հաճախականությամբ առավել ծանր տարերային աղետներից մեկն է երկրաշարժը: Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքն ամբողջությամբ սեյսմավտանգ է, գտնվում է 8-11 բալ ուժգնությամբ սեյսմիկ գոտում և պարբերաբար ենթարկվում է երկրաշարժերի ավերիչ ազդեցությանը:

9. Սեյսմատեկտոնական պայմանները բնութագրվում են ժամանակակից ակտիվ բեկվածքների և երկրաշարժերի օջախների առկայությամբ, որոնց համալիր ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս որոշելու տվյալ տարածքի պոտենցիալ սեյսմիկ վտանգի և սեյսմիկ ռիսկի մեծությունները: Տարածքը հատվում է բազմաթիվ սեյսմաակտիվ բեկվածքներով, որոնց համադրվում են տարբեր ուժգնության (այդ թվում՝ ավերիչ) երկրաշարժերի օջախները: Ըստ Հայաստանի Հանրապետության սեյսմակայուն շինարարության նախագծման 2006թ-ի նորմերի, մարզը գտնվում է 2-րդ և 3-րդ սեյսմիկ գոտիներում: Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքը, Ախուրյան համայնքը, Անի համայնքի արևմտյան մասը, ինչպես նաև Ամասիա, Արփի, Աշոցք և Սարապատ համայնքների հարավային մասերը գտնվում են 3-րդ սեյսմիկ գոտում և կարող են ենթարկվել 9 և բարձր բալ սեյսմիկ ուժգնության ցնցումների, ուր գրունտների արագացումը կարող է կազմել 0,40G, մնացած տարածքները ունեն համեմատաբար սեյսմիկ վտանգի ցածր մակարդակ՝ 8-9 բալ ուժգնություն և մինչև 0,30G արագացում: Բարձր սեյսմիկ պոտենցիալ ունեն Անիի և Բայանդուրի օջախները, որոնք սպառնում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի, Արթիկ համայնքներին, Անի համայնքի Մարալիկ բնակավայրին և Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրին:

Մեծ վտանգ են ներկայացնում նաև Սպիտակ-Ձորաշեն օջախները, ինչպես նաև Ջավախքի օջախի գոտին, որը հիմնական վտանգ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք, Ամասիա, Սարապատ և Արփի համայնքների համար:

10. Հնարավոր իրադրության բնութագիրը՝

1) համաձայն լիազոր մարմնի տվյալների՝ երկրաշարժի առավել հավանական էպիկենտրոն է համարվում՝

Սպիտակ՝ $\lambda = 44^0 23'$, $\varphi = 40^0 92'$, M=7.1, H=15 կմ (9-10 բալ).

2) հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սպիտակի երկրաշարժը հնարավոր առավել մեծ վնաս կհասցնի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքին, պլանում հնարավոր իրադրության գնահատականը տրված է Սպիտակի երկրաշարժի դեպքում (9-10 բալ): Նշված օջախի նկատմամբ բնակավայրերի հեռավորությունից կախված՝ նրանց տարածքները կենթարկվեն տարբեր ուժգնության ցնցումների.

3) առավել ծանր իրավիճակ կստեղծվի Գյումրի քաղաքում, որտեղ կենտրոնացված է մարզի առավել մեծ թվով բնակչության թվաքանակը – 145800, հրդեհապայթյունավտանգ 54, պայթյունավտանգ՝ 6, հրդեհավտանգ՝ 123 և քիմիական վտանգավոր 2 օբյեկտներ: Հնարավոր ուժեղ երկրաշարժի հետևանքով, որպես երկրորդային խոցման օջախներ, կարող են վթարվել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մանթաշի, Վարդաքարի, Սառնաղբյուրի, Արփի լճի, Թավշուտի, Կառնուտի հիդրոտեխնիկական կառույցների պատվարները, որի հետևանքով բազմաթիվ բնակավայրեր կհայտնվեն ջրածածկման գոտում (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում հիդրոտեխնիկական կառույցների պատվարների հնարավոր փլուզման դեպքում հնարավոր իրավիճակի աղյուսակը ներկայացված է հավելված N2-ում), ինչպես նաև հնարավոր է արձանագրվեն քիմիական վտանգավոր օբյեկտների վթարներ.

4) երկրաշարժի հետևանքով հնարավոր են բազմաթիվ երկրորդական վտանգավոր երևույթներ՝ փլուզումների, սողանքների, սելավների տեսքով, որոնք իրենց հերթին կստեղծեն լրացուցիչ բազմաթիվ խոցող գործոններ: Կավերվեն և կվնասվեն ճանապարհային շինություններն ու կառույցները, կխցանվեն ավտոմայրուղիները.

5) 9,0 – 9,5 բալ ուժգնությամբ սեյսմավտանգ գոտում կհայտնվեն մարզի թվով 15 բնակավայր.

6) 7,5 – 8,0 բալ ուժգնությամբ սեյսմավտանգ գոտում կհայտնվեն մարզի թվով 70 բնակավայր.

7) 8,5 բալ ուժգնությամբ սեյսմավտանգ գոտում կհայտնվեն մարզի թվով 45 բնակավայր.

բնակչության շրջանում ընդհանուր կորուստները կկազմեն՝ 4491, որից անվերադարձ – 1604, սանիտարական – 2887, ծանր վիրավոր – 1443, միջին ծանրության վիրավորներ – 779, թեթև վիրավորներ – 66 (Գյումրի քաղաքում բնակչության շրջանում ընդհանուր կորուստները կկազմեն՝ 1913, որից անվերադարձ – 683, սանիտարական – 1229, ծանր վիրավոր – 615, միջին ծանրության վիրավորներ – 332, թեթև վիրավորներ – 283).

8) երկրաշարժի հետևանքով մարզում կստեղծվի հետևյալ ինժեներական իրավիճակը՝ վնասված բնակարաններ՝ 8019, որոնցից, 3-րդ կարգ՝ 2726, 4-րդ կարգ՝ 1092, 5-րդ կարգ՝ 4250, (ք.Գյումրիում վնասված բնակարաններ՝ 4250, որոնցից, 3-րդ կարգ՝ 1162, 4-րդ կարգ՝ 444, 5-րդ կարգ՝ 1810): Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում խոշոր հրդեհների թիվը կկազմի 31 (Գյումրիում խոշոր հրդեհներ՝ 13), մարզում խոշոր վթարներ կոմունալ - էներգետիկ ցանցում՝ 297 հատ (քաղ. Գյումրիում՝ 127), փլատակների մակերեսը կկազմի 118573քառ.մ , ծավալը՝ 10531345խոր.մ (Գյումրիում՝ 50501 քառ.մ, ծավալը՝ 4485384 խոր.մ).

9) հնարավոր են նաև մասնակի վնասվածքներ Գյումրի քաղաքի թվով երկու կարևորագույն նշանակության կամուրջների կոնստրուկցիաներում՝ դրանցից մեկը 1988թ.-ի երկրաշարժին կանգուն մնացած և դեռ չամրացված Գյումրի քաղաքի ռազմավարական նշանակության ամենամեծ ավտոմոբիլային կամուրջը, որը կառուցված է «Գյումրի Չայ» գետակի վրա՝ Ալեք Մանուկյան փողոցում, որը քաղաքի 2 կենտրոնական մասերը միացնում է իրար: Կամուրջի երկարությունը՝ 175մ. լայնությունը՝ 20մ., բարձրությունը՝ 30մ., թույլատրելի կրողականությունը՝ 120տ., թռիչքների թիվը՝ 4, իսկ մյուսը՝ Գյումրու Տերյան փողոցի ու Գարեգին Նժդեհի հրապարակի խաչմերուկում գտնվող 45 մ. երկարությամբ, 12 մ. լայնությամբ և 20 մ. բարձրությամբ ամենամեծ երկաթուղային կամուրջը, որի տակով անցնում է Գյումրի-Երևան, Գյումրի-Ախուրյան ավտոմոբիլային ճանապարհները.

10) փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման համար կպահանջվեն 135 ձեռքով աշխատող փրկարարական խմբեր՝ 943 մարդուց բաղկացած անձնակազմով (քաղ. Գյումրիում՝ 57 կազմավորում՝ 462 մարդուց բաղկացած անձնակազմով), 27 մեխանիզացված փրկարարական խմբեր՝ 620 մարդուց բաղկացած անձնակազմով (քաղ. Գյումրիում՝ 11 կազմավորում՝ 264 մարդուց բաղկացած անձնակազմով), 46 սանիտարական խմբեր՝ 277 մարդուց բաղկացած անձնակազմով (քաղ. Գյումրիում՝ 20 կազմավորում՝ 118 մարդուց բաղկացած անձնակազմով), 36 հրդեհաշիջման մարտական հաշվարկներ (քաղ. Գյումրիում՝ 15), 18 վթարավերականգնողական խմբեր, (քաղ. Գյումրիում՝ 8 խումբ), 36 հասարակական կարգի պահպանման ջոկեր, (քաղ. Գյումրիում՝ 15 խումբ).

11) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում անհրաժեշտ կլինի ընդհանուր թվով 90 միավոր ինժեներական տեխնիկա, որից մղան -30, էքսկավատոր - 30, ավտոկռունկ – 30, (քաղ. Գյումրիում՝ 38 միավոր ինժեներական տեխնիկա, որից մղան -13, էքսկավատոր - 13, ավտոկռունկ – 13), մարզում ինքնաթափեր - 58, կոմպրեսորային կայաններ – 27, էլեկտրակայաններ - 31 (ք.Գյումրիում՝ ինքնաթափեր -25, կոմպրեսորային կայաններ - 11, էլեկտրակայաններ - 13).

12) փլվածքներով փակված փողոցները՝ 55 կմ. (Գյումրի քաղաքում՝ 24 կմ.):

III. ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԾԱԳՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

11.Կառավարման կազմակերպումը՝

1) ՈՒժեղ երկրաշարժի դեպքում մինչև Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային արտակարգ իրավիճակների հանձնաժողովի նիստի գումարումը, բնակչության պաշտպանության միջոցառումների ղեկավարումը կազմակերպում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետը իր ստորաբաժանումների ուժերով, ընդգրկելով մարզային բժշկական ծառայության, մարզային ոստիկանության, չտուժված այլ համայնքների ուժերը և միջոցները, կատարված աշխատանքների մասին զեկուցելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին.

2) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետը, վարչության ճգնաժամային կառավարման կետի հրահանգչից ստանալով ուժեղ երկրաշարժի մասին հաղորդագրությունը, աղետի գոտում ծավալում է իր և աղետի հետևանքների վերացման կառավարման կետեր, փրկարարական աշխատանքների տեղամասերի ղեկավարները նշանակվում են Շիրակի մարզային փրկարարական վարչության անձնակազմից և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի վարչությունների պետերից կամ տեղակալներից և ենթարկվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի աղետի հետևանքների վերացման հանձնաժողովին.

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի հանձնարարականով Հայաստանի Հանրապետության ոստիկանության Շիրակի մարզային վարչությունը պարեկային հսկողություն է սահմանում Գյումրի-Աշտարակ-Երևան հանրապետական նշանակության ավտոմոբիլային

ճանապարհին՝ արգելելու բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների և մարդկանց մուտքը աղետի գոտի, բացառությամբ փրկարարական, բժշկական և մեխանիզացված կազմավորումների:

4) մարզային արտակարգ իրավիճակների հանձնաժողովը ղեկավարում է բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման ամբողջ գործընթացը:

5) գործում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության տարահանման հանձնաժողովը, որի նախագահն է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալը: Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության տարահանման հանձնաժողովը ղեկավարում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում ուժեղ երկրաշարժի դեպքում բոլոր տարահանման միջոցառումները:

6) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային արտակարգ իրավիճակների հանձնաժողովին կից ստեղծվում են՝

ա. նյութատեխնիկական միջոցներով և սննդամթերքով ապահովող խմբեր,

բ. միջազգային մարդասիրական օգնությունն ընդունող-բաշխող խմբեր,

գ. վրանային ավանների ծավալման երկու խումբ (անհրաժեշտության դեպքում):

12. Ազդարարման կազմակերպումը՝

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի հրահանգիչը ստանալով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության հյուսիսային տարածաշրջանային կենտրոնից մարզի տարածքում տեղի ունեցած ուժեղ երկրաշարժի մասին հաղորդագրությունը, այն փոխանցում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին.

1) զուգահեռ՝ մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի կրտսեր հրահանգիչը կազմակերպում է մարզի և Գյումրի քաղաքի ղեկավար կազմի, արտակարգ իրավիճակների հանձնաժողովի, մարզի համայնքների ղեկավարների և բնակչության տարահանման հանձնաժողովի անդամների ազդարարումը: Ազդարարման համակարգի խափանման դեպքում մարզի ղեկավար կազմի ազդարարումն իրականացվում է սուրհանդակների, իսկ տուժած բնակչության իրազեկումը և վարվելակերպի մասին կանոնները՝ մարզային ոստիկանության շարժական ուժերով ու միջոցներով.

2) պլանում ներգրավված մարմինների անձնակազմերից յուրաքանչյուրը, զգալով երկրաշարժին բնորոշ ցնցումներ կամ տեսնելով փլուզումներ, հնարավորության դեպքում ներկայանում է իր աշխատավայր՝ առանց ազդարարվելու:

13. Կապի կազմակերպումը՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ կապը մարզի մնացած համայնքների, մարզային ծառայությունների ղեկավարների հետ կազմակերպելու համար օգտագործվում են քաղաքային, միջքաղաքային, միջհամայնքային գործող ցանցերը, բջջային և ֆաքսիմիլային կապերը:

2) կարճալիք N 1 ռադիոցանցով կապ է կազմակերպվում՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի կառավարման կետի և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի շարժական կառավարման կետերի հետ.

3) կարճալիք N 2 ռադիոցանցով կապ է կազմակերպվում՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության միջև.

4) կարճալիք N 3 և գերկարճալիք N 3 ռադիոցանցերով կապ է կազմակերպվում՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի փրկարարական աշխատանքների տեղամասերի ղեկավարների և հասարակական փրկարարական ուժերի միջև:

5) քաղաքային, միջքաղաքային կապուղիների և ուղիղ հեռախոսակապով կապը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի, մարզային փրկարարական վարչության, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության հյուսիսային տարածաշրջանային կենտրոնի հերթապահ մասի միջև:

14. Երկրաշարժի գոտում հետախուզության կազմակերպումը՝

1) հետախուզության անմիջական կազմակերպիչներ են Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետը.

2) հետախուզության նպատակը, հիմնական ուղղությունները, ներգրավվող ուժերի ու միջոցների վերաբերյալ առաջարկությունները ներկայացնում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետը.

3) ճառագայթային, քիմիական, մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգում ընդգրկված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային կազմակերպությունների աշխատանքները արտակարգ իրավիճակներում վերահսկում և համակարգում է մարզում լիազոր մարմին հանդիսացող Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչությունը.

4) հետախուզություն իրականացնող բոլոր ուժերի փոխգործողությունները կազմակերպվում են՝ ըստ խնդիրների, ուղղությունների, օբյեկտների, ժամանակի և գործողությունների տեսակների: Հետախուզական ուժերի համագործակցությունը իրականացվում է՝ համաձայն նախապես մշակված փոխգործողությունների պլանի.

5) իրադրության վերաբերյալ ձեռք բերված տվյալները վերլուծվում և զեկուցվում են համապատասխան ղեկավարներին՝ համաձայն կառավարման սխեմայի.

6) հետախուզական տվյալները զեկուցում են կապի միջոցներով, ինչպես նաև նախապես մշակված զեկույցների հաշվետախտակի համաձայն.

7) հետախուզության այն տվյալները, որոնք պահանջում են շտապ որոշման ընդունում, զեկուցվում են անմիջապես.

8) հետախուզական ուժերը պատրաստականության են բերվում Ժ +1.30.

9) հետախուզական ուժերի կազմի մեջ մտնում են՝

ա. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության հրշեջ փրկարարական ջոկատների հետախուզական խմբերը,

բ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքային հետախուզական ուժերը,

գ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի կազմակերպությունների ընդհանուր և հատուկ հետախուզության ուժերը,

դ.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի հիմնարկները.

10) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային մակարդակում ներգրավվում են՝

ա. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն «Շիրակ» մասնաճյուղը,

բ. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն «Հիդրոմետ ծառայություն» Ախուրյանի գետավազանի ջրաբանական կայանը իր թվով 5 հիդրոլոգիական դիտակետերով՝ Ամասիայի, Ախուրիկի, Կարկաչուն–Ղարիբջանյան, Իլլի գետ–Ջրաձոր և Կրասար,

15. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության՝ կացարաններով ապահովումը և տարահանման կազմակերպումը՝

1) ուժեղ երկրաշարժի դեպքում, ելնելով երկրաշարժի ուժգնությունից և հիմք ընդունելով ավերվածությունների և մարդկային կորուստների հաշվարկները, Գյումրի քաղաքի 158426 բնակչությունից հնարավոր է անվերադարձ կորուստներ՝ 683 մարդ, և սանիտարական կորուստներ՝ 1229 մարդ.

2) քաղաքում հնարավոր է բնակելի շենքերի, առանձնատների, կառույցների ու շինությունների հիմնական մասի լրիվ կամ մասնակի ավերում, Գյումրի քաղաքում 12978 մարդ կմնա անօթևան: Անօթևան մնացած բնակչությունը կացարաններով ապահովվում է հետևյալ ձևերով՝

ա. ապակենտրոնացված տեղաբաշխում,

բ. տեղավորում ճամբարներում,

գ. կոլեկտիվ տեղավորում.

3) ապակենտրոնացված տեղաբաշխմանդեպքում անօթևան բնակչությանը տեղավորում են բնակվելու համար պիտանի տներում.

4) անօթևան մնացած 12978 բնակչության 70%-ը՝ 9085 մարդ (երեխաներ, հղի կանայք, ծերեր, հաշվանդամներ) տարահանվում են քաղաք Երևան, որպես տարահանման միջանկյալ հավաքակայան համարվում է Գյումրու Վարդանանց հրապարակը, ներառյալ դիմացի պուրակը: Տարահանման երթուղին է՝ Գյումրի-Բագրավան-Արագած ավան - Քարակերտ-Արմավիր-Էջմիածին-Երևան, անհրաժեշտ տրանսպորտային միջոցների թիվը՝ 303 ավտոբուս.

5) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի անօթևան մնացած 3893 բնակիչների համար նախատեսվում է մեկ վրանային ճամբար՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Հովունի բնակավայրի տարածքի հողատարածքներում, որոնց բնութագրերը և առանձնահատկությունները ուսումնասիրված են:

IV.ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԾԱԳՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

16. Արտակարգ իրավիճակների արձագանքման հիմունքները՝

17.Փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումը և իրականացումը՝

18.Փրկարարական աշխատանքներին խոչնդոտող վթարավերականգնողական աշխատանքները ներառում են՝

ա.ավտոմոբիլային երթևեկության կարգավորումը,

բ.գետին ընկած հոսանքալարերի վնասազերծումը,

գ. գազի, ջրի հնարավոր հոսքերի վերացումը,

դ. չվերահսկվող զանազան թունավոր նյութերի հայտնաբերումը և չեզոքացումը.

19. Երկրաշարժի գոտու և մարզի սեյսմիկ իրավիճակի հսկողությունը, իրավիճակի մասին տեղեկությունն ապահովում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության հյուսիսային տարածաշրջանային կենտրոնը.՝

1) Ժ+30 ճշտում է երկրաշարժի էպիկենտրոնի կոորդինատները, ուժգնությունն ու աղետի մասշտաբները և արդյունքների մասին անմիջապես զեկուցում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության տնօրենին.

2) հսկողության տակ է վերցնում երկրաշարժի գոտու տարածքի ընթացիկ սեյսմիկ իրավիճակը, ավերածությունների բնույթն ու մասշտաբները, բնակչության հոգեբանական վիճակը և պարբերաբար (օրական մեկ անգամ) տեղեկություններ է ներկայացնում երկրաշարժի հետևանքների վերացման մարզային հանձնաժողովին.

3) կատարում է երկրաշարժի հետևանքով վնասված շենքերի և շինությունների սեյսմակայունության գնահատում.

4) մարզային հեռուստառադիոընկերությունները պարբերաբար բնակչությանը տալիս են տեղեկություններ ստեղծված իրավիճակի մասին:

20. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի փրկարարական, վթարավերականգնողական, հասարակական փրկարարական խմբերի և բնակչության բազայի հիման վրա կազմվում է ուժերի խմբավորում, որը նախատեսված է փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքներ իրականացնելու համար: Աղետի գոտում փրկարարական աշխատանքներ իրականացնող ուժերն ու միջոցները կազմված են՝

1) առաջին էշելոնից, որը նախատեսված է իրավիճակը բացահայտելու, գնահատելու, փրկարարական աշխատանքներ սկսելու և հետագայում ժամանող ուժերի ներգրավումն ապահովելու համար: Այն ընդգրկում է՝

ա. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության ստորաբաժանումների 2/3-ը (մնացած ուժերը մնում են հիմնական տեղակայման վայրերում՝ ամենօրյա խնդիրների լուծման համար),

բ. այլ մարզերի ուժերը.

2) երկրորդ էշելոնից, որը նախատեսված է փրկարարական աշխատանքների ծավալը կտրուկ ընդլայնելու համար: Ընդգրկում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առաջին կանչի ուժերը՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատները, համապատասխան կազմակերպությունների վթարավերականգնողական խմբերը և ուժեր Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Շիրակի զինվորական կայազորից.

3) երրորդ էշելոնից կամ պահուստից, որը նախատեսված է անսպասելի ծագող խնդիրների լուծման համար: Ընդգրկում է երկրորդ էշելոնում չընդգրկված մարզային և համայնքային ուժերը, հասարակական փրկարարական խմբերը և ներգրավված բնակչությանը: Փրկարարական աշխատանքների իրականացման նպատակով ուժերի և միջոցների ստեղծման ժամանակ պահպանվում են նրանց չմասնատելու սկզբունքները՝ գլխավոր խնդրի իրականացման համար, հաշվի առնելով բնակավայրերի ավերվածության աստիճանը և նրանցում բնակչության թիվը (խտությունը): Ուժերի տեղակայման վայր ընտրելիս՝ հաշվի են առնվում հիգիենիկ-համաճարակային իրավիճակը, գերակշռող քամիների ուղղությունը, ճանապարհների առկայությունը երկրաշարժից ավերված գոտիներում (հատվածներում), փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքներ իրականացնելիս՝ ուժերի և միջոցների կենտրոնացված ղեկավարությունն իրագործելու

հնարավորությունները, նյութատեխնիկական ապահովումը, ուժերի և միջոցների ուղարկումն առաջին հերթին խիտ բնակեցված հատվածներ՝ փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքներ կատարելու համար:

21. Աշխատանքային տեղամասերի ղեկավարները մինչև փրկարարական աշխատանքների սկիզբը կազմակերպում են տվյալ աշխատանքային տեղամասում գործող ուժերի համագործակցությունը՝

1) որոշում են աշխատանքների կատարման կարգը և հաջորդականությունը՝ ըստ կատարման ժամանակի.

2) որոշում են ինժեներական տեխնիկայի օգտագործման կարգը՝ աշխատատար աշխատանքներն իրականացնելու ընթացքում.

3) համաձայնեցնում են ըստ կատարման տեղի և ժամանակի ներգրավված ուժերի գործողությունները.

4) որոշում են կառավարման և կապի կազմակերպման կարգը ստորաբաժանումների և կազմավորումների հրամանատարների միջև.

5) հայտ են ներկայացնում արտակարգ իրավիճակների մարզային հանձնաժողով՝ լրացուցիչ ուժեր հատկացնելու համար: Փրկարարական աշխատանքների կատարման ընթացքում ճշտում և անընդհատ զբաղվում են համագործակցության հարցերով.

6) տեխնիկայի մուտքը երկրաշարժի գոտի նախատեսվում է՝

ա. առաջինը՝ թրթուրավոր տեխնիկայի մուտքը,

բ. այնուհետև՝ անվավոր մեքենաների մուտքը.

7) դեպի աշխատանքային տեղամասեր փրկարարական ուժերի մուտքն ապահովելու համար նախատեսվում են փրկարարական ուժերի առաջ շարժումը (մուտքն աղետի գոտի) ապահովող խումբ և սանիտարական դրուժինաներ.

8) որպես առանձին միջոցառում՝ փրկարարական ուժերի մուտքի ապահովումը հակահրդեհային ապահովումն է, որն իրականացվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ստորաբաժանումների ուժերով և ներառում է հրդեհների տեղայնացումն ու մարումը, ապահովվում են վառվող, ծխապատ և գազերով լցված շինություններից մարդկանց փրկումը և տեղափոխումն անվտանգ վայրեր.

9) փրկարարական ուժերի երկրաշարժի գոտում փրկարարական աշխատանքների տեղամասեր ժամանումից հետո աշխատանքների տեղամասերի ղեկավարները միջոցներ են ձեռնարկում փլուզված և այրվող շենքերից ու շինություններից մարդկանց փրկելու, առաջին

օգնություն ցուցաբերելու և դաշտային կամ ստացիոնար բուժհիմնարկներ տեղափոխելու համար.

10) տուժածներին հայտնաբերելու նպատակով՝ փրկարարական կազմավորումների ղեկավարներն աշխատանքային տեղամասեր են ուղարկում որոնման խմբեր, որոնք մանրակրկիտ զննում են փլուզված շենքերը և կառույցները: Տուժածների տեղերը հայտնաբերելու գործընթացում անհրաժեշտ է օգտագործել տեղի բնակչության կողմից ստացված տեղեկատվությունը և բնակչության ուժերն օգտագործել տուժածներին փլատակների տակից դուրս բերելու համար, քանի որ այդ ժամանակ մեծանում է ձեռքի աշխատանքների ծավալը:

22. Ինժեներական ապահովումը միջոցառումների համակարգ է՝ ուղղված բնակչության պաշտպանությանը, փրկարարական ուժերի և միջոցների առաջանցման հիմնական և շրջանցիկ ուղիների ապահովմանը, երկրաշարժի հետևանքով ավերված տարածքներում փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպմանն ու իրականացմանը: Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում ինժեներական ապահովման միջոցառումների իրականացման համար պատասխանատու է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչությունը:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում երկրաշարժի հետևանքների վերացման աշխատանքների ինժեներական ապահովման խնդիրներն են՝

1) ինժեներական հետախուզության կազմակերպումը, արդյունքների վերլուծումը և գնահատումը, անհրաժեշտ փրկարարական ու վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումը և իրականացումը.

2) փողոցների, ճանապարհների անցանելիության ապահովման միջոցառումների իրականացումը.

3) բնակչությանը տեղափոխելու, տարահանման ուղիների անցանելիության ապահովումը.

4) փրկարարական ուժերի՝ վնասված օջախներին մոտեցման ապահովումը.

5) կառավարման կետերի նախապատրաստումը և համապատասխան գույքով հագեցումը.

6) փրկարարական աշխատանքների տեղամասերի լուսավորության ապահովումը գիշերային ժամանակ.

7) վնասված կամուրջների ուսումնասիրությունը և գետանցումների ապահովումը.

8) բնակչության տարահանման կետերի նախապատրաստումը.

9) տուժած բնակչության՝ ժամանակավոր կացարաններով, գիշերային լուսավորությամբ և այլ կենսաապահովման անհրաժեշտ միջոցներով ապահովումը.

10) բնակչության՝ խմելու ջրով ապահովումը.

11) երկրաշարժի հետևանքների վերացման ինժեներական ապահովումն իրականացվում է մարզի տարածքի շինարարական կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) ուժերով և միջոցներով:

23. Բժշկական ապահովումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունը: Ուժեղ երկրաշարժի ծագման դեպքում, որը կարող է հանգեցնել 2887 մարդկանց սանիտարական կորստի, շարքից դուրս հանել առողջապահական հիմնարկների՝ ինչպես շենքերը, այնպես էլ՝ բուժանձնակազմին, տուժածների բժշկական ապահովման համար կներգրավվեն հանրապետության և մարզային բժշկական ուժերը և արտասահմանյան երկրներից՝ որպես հումանիտար օգնություն ստացված բժշկական միջոցները: Երկրաշարժից տուժածների հիմնական զանգվածը բժշկական օգնություն ստանալուց հետո կտարահանվի անվտանգ տարածքներ:

Տարահանման միջոցառումների տրանսպորտային ապահովումը սանիտարական տրանսպորտով իրականացվում է մարզի անվնաս մնացած սանիտարական տրանսպորտով և մարզային տրանսպորտային ծառայության կողմից տրամադրված տրանսպորտային միջոցներով:

24. Հասարակական անվտանգության ապահովումն ընդգրկում է կազմակերպչական և ռեժիմային միջոցառումների համալիր, որն ուղղված է ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների հաջող իրականացմանը: Հասարակական անվտանգության ապահովումը կազմակերպվում է քաղաքներում և այլ բնակավայրերում, բնակչության տարահանման գոտիներում հասարակական կարգի պահպանության, փրկարար ուժերի մուտքի և տարահանման երթուղիներում ճանապարհային երթևեկության անվտանգության միջոցառումների իրականացման նպատակով, ինչպես նաև՝ աղետի ժամանակ բնակչության կորուստների հաշվառման համար:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում հասարակական կարգի ապահովումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության Շիրակի մարզային վարչության ուժերով և միջոցներով:

25. Նյութատեխնիկական միջոցներով և սննդամթերքով ապահովման միջոցառումներն իրականացնում են մարզային արտակարգ իրավիճակների հանձնաժողովի կողմից ստեղծված հատուկ աշխատանքային խմբերը, որոնց աշխատանքները համակարգում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչությունը:

Աշխատանքային խմբերը ճշտում են ռեզերվի նյութատեխնիկական միջոցները, պատրաստում համապատասխան բացթողման ցուցակագրեր, ճշտում փրկարարական ուժերի անձնակազմի թիվը և վերահաշվարկում են նրանց համար պահանջվող նյութատեխնիկական միջոցների հաշվարկները, իրականացնում աղետի գոտի մեկնող փրկարարական ուժերի նյութատեխնիկական միջոցների բացթողումը, կազմակերպում են անհրաժեշտ միջոցների բարձման, տեղափոխման և բաշխման գործընթացները ըստ աղետի գոտու բնակավայրերի:

Մարզում նյութատեխնիկական և սննդի ապահովումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությունը:

26. Տրանսպորտային ապահովումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի անվնաս մնացած և այլ մարզերից որպես օգնություն տրամադրված տրանսպորտային միջոցներով: Անհրաժեշտ տրանսպորտային միջոցները հետևյալն են՝

1) մարդատար ավտոմեքենաներ (ավտոբուսներ, միկրոավտոբուսներ), որոնք նախատեսված են փրկարարական կազմավորումներ, համապատասխան մասնագետների խմբեր, միջազգային փրկարարական ուժեր և այլն տեղափոխելու, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում աղետի գոտի փոքրաձավալ նյութատեխնիկական միջոցներ տեղափոխելու, իսկ աղետի գոտուց տուժած բնակչությանը տարահանելու համար.

2) բեռնատար ավտոմեքենաներ, որոնք նախատեսված են նյութատեխնիկական, ինչպես նաև առաջին անհրաժեշտության միջոցներ (սննդամթերք, հագուստ և հանդերձանք, վրաններ, անկողնային պարագաներ, ջեռուցման սարքեր, դեղամիջոցներ, տնտեսական իրեր և այլն) աղետի գոտի տեղափոխելու համար.

3) բեռնատար (նավթատար) և ջրատար ավտոմեքենաներ, որոնք նախատեսված են վառելիք և ջուր աղետի գոտի տեղափոխելու, ինչպես նաև գործող տրանսպորտային միջոցների լցավորումն ապահովելու համար.

4) ինժեներական (շինարարական) և հատուկ տեխնիկա, որը նախատեսված է աղետի գոտում համապատասխան աշխատանքներ իրականացնելու համար:

27. Տեղեկատվական ապահովումը ներառում է՝

1) երկրաշարժի վերաբերյալ որևէ հրատապ հաղորդագրության դեպքում կազմվում է բնակչության վարքականոնների մասին հաղորդագրություն, որը փոխանցվում է «Վեոն Արմենիա», «ՎիվաՍել ՄՏՍ» և «Յուքոմ» բջջային կապի օպերատորներին (և մարզային կապի հանգույցներին)՝ բաժանորդներին SMS հաղորդագրություններ ուղարկելու համար: Այս հաղորդագրությունները տրվում են նաև տեղական հեռարձակման հանգույցներով:

Անհրաժեշտության դեպքում Հայաստանի հանրային հեռուստատեսությամբ և Հայաստանի հանրային ռադիոյով «Հատուկ թողարկում» խորագրի ներքո պարբերաբար հեռարձակվում է տեղեկատվություն բնակչության վարքականոնների, իրավիճակի, հետագա հնարավոր զարգացումների և իրականացվելիք միջոցառումների մասին.

28. Բնակչության կենսաապահովման, տուժածներին օգնություն ցուցաբերելու, փրկարարական աշխատանքների կազմակերպման համար և այդ նպատակով պարենային, բժշկական ու նյութական պաշարների նպատակային օգտագործման կարգն է՝

1) երկրաշարժի ժամանակ լուծվում են բնակչության կենսաապահովման հիմնական խնդիրները՝ բնակչության կյանքին, առողջությանը, աշխատունակությանը և ֆիզիոլոգիական պահանջների ապահովմանն ու պահպանմանը վերաբերող: Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման նյութատեխնիկական ապահովումը և ֆինանսավորումն իրականացվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին: Այդ նպատակներին ծառայում են նաև առկա և ստեղծվող (ստացվող) նյութական պաշարները ու այլ մարզերի, համայնքների, կազմակերպությունների ու մարդասիրական օգնության միջոցները.

2) արտակարգ իրավիճակների համար անհրաժեշտ նյութական պաշարների ու միջոցների ցանկը և ծավալները որոշում են ըստ չափաքանակների, տուժած բնակչության թվի հիման վրա և արտակարգ իրավիճակների դասակարգմանը համապատասխան.

3) նյութական պաշարները և միջոցները պետք է օգտագործվեն առաջնահերթ՝ հետևյալ միջոցառումների իրականացման համար՝ վթարափրկարարական, մարդկանց կյանքի և առողջության անմիջական վտանգի վերացման աշխատանքների, տուժած բնակչության համար ժամանակավոր կացարանների ու սննդի կետերի ծավալման և դրանց գործունեության ապահովման, միանվագ նյութական օգնության ցուցաբերման և այլն.

4) տուժած բնակչության սոցիալական և կենսաապահովման, այդ թվում՝ անօթևան մնացած բնակչության՝ ժամանակավոր կացարաններով ապահովման կազմակերպիչն ու պատասխանատուն պետական կառավարման տարածքային մարմինն է, համագործակցելով համապատասխան նախարարությունների և գերատեսչությունների հետ.

5) երկրաշարժի դեպքում նյութական պաշարների և միջոցների առաջնահերթ օգտագործման կանոնները սահմանում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների հանրապետական հանձնաժողովը.

6) փրկարարական աշխատանքների և կենսաապահովման տարրերով բնակչության ապահովման ավարտից հետո կազմվում է իրականացված միջոցառումների ընթացքում

օգտագործված նյութական պաշարների ու միջոցների մասին հաշվետվություն, որի հիման վրա՝ սահմանված կարգով լրացվում են պաշարներն ու միջոցները:

V. ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՀԱՊԱՂ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

29. Մահացածների ճանաչման և հուղարկավորման կազմակերպումը

1) երկրաշարժից հետո սկսած առաջին ժամերից փլատակների տակից դուրս են բերում տուժածներին և զոհվածներին.

2) մահացածների դիակները առաջին ժամերին դրվում են փլատակների մոտ՝ հարազատների կողմից ճանաչման նպատակով.

3) մեկ օրից հետո Հայաստանի Հանրապետության ոստիկանության Շիրակի մարզային վարչության համապատասխան աշխատակիցների կողմից համատեղ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի աշխատակիցների հետ իրականացվում են անվերադարձ կորուստների հաշվառումը և դիակների հուղարկավորության կազմակերպումը.

4) դիակները նկարվում են, համարակալվում և համապատասխան համարներով փակցվում ոստիկանության համապատասխան բաժանմունքներում.

5) հուղարկավորության ժամանակ այդ համարները տեղադրվում են գերեզմանների վրա՝ հետագայում հարազատների կողմից մահացածների ճանաչման և վերահուղակավորման նպատակով.

30. Շինարարական աղբի հեռացումը որոնողափրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման գոտուց

1) փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների հետ զուգահեռ կազմակերպվում է շինարարական աղբի հեռացումը և ճանապարհների մաքրման աշխատանքների իրականացումը.

2) շինարարական աղբը տեղափոխվում է համաձայն համապատասխան կառույցների ղեկավարների ցուցումների՝ նախօրոք նախատեսված արտաքաղաքային գոտիներ.

31. Վթարավերականգնողական աշխատանքների պլանավորումն ու իրականացումը

1) երկրաշարժի գոտու հետախուզական տվյալները հավաքվում և վերլուծվում են Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության աշխատանքային խմբում՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի համապատասխան

ներկայացուցիչների մասնակցությամբ.

2) վերլուծության արդյունքում որոշվում են՝

ա. երկրաշարժի հետևանքների ծավալները,

բ. փրկարարական աշխատանքների բնույթը, ծավալը և անցկացման հաջորդականությունը,

գ. ուժեղ ներգործող թունավոր նյութեր օգտագործող կազմակերպությունների (օբյեկտների) վթարի բնույթը, ծավալները, ինչպես նաև թունավոր նյութերի հնարավոր ազդեցությունը փրկարարական ուժերի գործողությունների վրա,

դ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի փրկարարական ուժերի կազմը, վիճակն ու փրկարարական աշխատանքների կատարման հնարավորությունը և այդ նպատակով այլ չտուժված համայնքների, մարզերի վթարավերականգնողական ուժերի ու բնակչության ներգրավման անհրաժեշտությունը,

ե. միջազգային օգնության կարգով հատկացվող ուժերի ու միջոցների օգտագործման անհրաժեշտությունը, քանակը և ներգրավման վայրը,

զ. տեղանքի բնույթը, ճանապարհների վիճակը, տարվա օրվա ժամանակն ու եղանակը և այդ գործոնների ազդեցությունն ուժերի գործողությունների վրա,

է. աղետի գոտի ուժերի մուտքի առավել նպատակահարմար ուղղությունները,

ը. աշխատանքների կատարման եղանակները և անվտանգությունն ապահովող միջոցները.

3) ելնելով իրադրության գնահատման եզրակացություններից՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային արտակարգ իրավիճակների հանձնաժողովի նախագահն ընդունում է որոշում աղետի գոտում որոնողափրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքների իրականացման վերաբերյալ, ըստ որի աղետի գոտու համար նշվում են՝

ա. երկրաշարժի տարածքը և հետևանքները,

բ. փրկարարական աշխատանքների իրականացման համար ներգրավվող ուժերն ու միջոցները և նրանց խնդիրները,

գ. աշխատանքների կատարման անվտանգության միջոցառումները,

դ. աղետի գոտու տուժածների և բնակչության տարահանման երթուղիները,

ե. ներգրավված ուժերի համագործակցության կարգը և գործողություններն ապահովող միջոցառումները,

զ. պահեստային ուժերի և միջոցների կազմն ու տեղաբաշխումը,

է. փրկարարական աշխատանքների համակողմանի ապահովման կարգը,

ը. կառավարման կազմակերպման կարգը.

4) երկրաշարժի հետևանքների վերացման Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային հանձնաժողովի նախագահը փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքների իրականացման նպատակով կառավարման մարմինների և փրկարարական ուժերի ղեկավարներին տալիս է առաջադրանքներ՝ անձամբ կամ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության միջոցով:

5) արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց վնասի գնահատման Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային հանձնաժողովի կողմից իրականացվում է երկրաշարժի հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված նյութական վնասի գնահատում՝ հասցված վնասի ֆինանսական կամ նյութական փոխհատուցման նպատակով:

VI.ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐ ՈՒԺԵՐԻ ԵՎ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ, ՍՏԱՑՄԱՆ ՈՒ ԲԱՇԽՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

32. Միջազգային փրկարարական ուժերի ժամանման, փրկարարական աշխատանքների և փոխհամագործակցության կազմակերպման կարգը հետևյալն է՝ միջազգային ուժերի անմիջական ղեկավարումն աշխատանքային տեղամասերում իրականացնում է աշխատանքային տեղամասի ղեկավարը:

33. Մարդասիրական օգնության ստացման և բաշխման կարգը՝

Մարդասիրական օգնության ընդունման և բաշխման միջոցառումները բաղկացած են՝

1) մարդասիրական օգնության ընդունումից.

2) մարդասիրական օգնության բաշխումից:

34. Մարդասիրական օգնությունը տրվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային արտակարգ իրավիճակների հանձնաժողովի միջոցով՝ տուժած տարածքների կողմից ներկայացված հայտերի հիման վրա, որոնք կազմվում են նախօրոք մշակված նորմերի հիման վրա՝ հաշվի առնելով կոնկրետ աղետի դեպքում տուժած բնակչության հետ կապված առանձնահատկությունները:

35. Միջազգային մարդասիրական օգնությունը տրվում է միջազգային կազմակերպությունների, առանձին պետությունների և առանձին անհատների կողմից:

36. Միջազգային մարդասիրական օգնության ստացման օպերատիվությունն ապահովելու նպատակով այն նախօրոք պլանավորվում է՝ տուժածների համար սննդի, առաջին անհրաժեշտության առարկաների, վառելիքի նորմեր՝ 10 օրվա համար:

1) բեռներն ուղեկցվում են Հայաստանի Հանրապետության ոստիկանության Շիրակի մարզային վարչության և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության համապատասխան ներկայացուցիչների ուժերով.

2) աղետի գոտում մարդասիրական օգնությունը կենտրոնացված ձևով հանձնվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանում ստեղծված մարզային կամ համայնքային արտակարգ իրավիճակների հանձնաժողովներին կից ստեղծված մարդասիրական օգնության բաշխման խմբերին, որոնց ղեկավարում է լիազոր մարմնի ներկայացուցիչը: Այդ հանձնաժողովները, համապատասխան ցուցակների հիման վրա, մարդասիրական օգնությունը բաշխում են բնակչությանը:

ԲԱԺԻՆ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱԶՄԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԱՌՆԻԻ ԷՊԻԿԵՆՏՐՈՆՈՎ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԴԵՊՔՈՒՄ

VII. ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԾԱԳՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

37. Հայաստանի Հանրապետությունը գտնվում է Արևմտյան Ասիայում՝ Հարավային Կովկասում: Տարածքը՝ 29,8 հազ. քառակուսի կիլոմետր է: Հայաստանի Հանրապետության աշխարհագրական դիրքն է՝

1) հարավից 38^0 հյուսիսային լայնության 50'.

2) հյուսիսից 41^0 հյուսիսային լայնության 20'.

3) արևմուտքից 43^0 արևելյան երկայնության 30'.

4) արևելքից 46^0 արևելյան երկայնության 00'.

5) Հայաստանի Հանրապետության տարածքն աչքի է ընկնում իր բարդ լեռնային ռելիեֆով, որի բարձրությունները՝ հաշված ծովի մակերևույթից, տատանվում են 450-4096 մետրի սահմաններում: Հայաստանի տարածքի միջին բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է մոտավորապես 1830 մետր: Տարածքի 86,7 տոկոսը գտնվում է 1000-3000 մետր բարձրության վրա: Արաբական և Եվրասիական սալերի բախմամբ պայմանավորված՝ առանձնահատուկ ֆիզիկաերկրաբանական պայմանները, ինչպես նաև լեռնային ռելիեֆն ու կտրուկ մայրցամաքային կլիման նախասահմանել են Հայաստանի Հանրապետության տարածքում բնական վտանգների տեսակները՝ ուժեղ երկրաշարժեր, սողանքներ, փլուզումներ, սելավներ, ջրհեղեղներ և այլն: Կլիման չոր, մայրցամաքային է, ամառվա միջին

ջերմաստիճանը՝ +30^0 ից +35^{0}C , ձմեռվանը՝ -15 ից -20^{0}C : Հայաստանի Հանրապետությանը սպառնում են տարբեր բնական աղետներ՝ երկրաշարժ, սողանք, ջրհեղեղ, հեղեղում, սելավ, կարկուտ, քարաթափում և այլն: Ե՛վ ծավալով, և՛ դրսևորման հաճախականությամբ առավել ծանր տարերային աղետներից մեկն է երկրաշարժը: Հայաստանի Հանրապետության տարածքն ամբողջությամբ սեյսմավտանգ է (գտնվում է 8-11 բալ ուժգնությամբ սեյսմիկ գոտում և պարբերաբար ենթարկվում է երկրաշարժերի ավերիչ ազդեցությանը), բնութագրվում է բնական վտանգավոր երևույթներով ու գործընթացներով (սողանքներ, փլուզումներ, սելավներ, ջրածածկումներ, ցրտահարություն, ուժեղ քամիներ և շանթահարում, երաշտ, հորդառատ անձրևներ, կարկուտներ և այլն): Երկրաշարժերի առավել հայտնի օջախներ են հյուսիսային Հայաստանի (Անի, Սպիտակ, Նոյեմբերյան) օջախները, Արարատյան դաշտի երկրաշարժի օջախները, որոնք գտնվում են Հայաստանի կենտրոնական մասում (քաղ. Արարատ, Փարաքարի օջախ՝ Գառնիի և Դվինի օջախներ), որոնց դրսևորումները հազարամյակի ընթացքում դիտվում են Հայաստանի հարավում (Վայոց ձոր, Տաթև):

38. Սեյսմատեկտոնական պայմանները բնութագրվում են ժամանակակից ակտիվ բեկվածքների և երկրաշարժերի օջախների առկայությամբ: Բարձր սեյսմիկ պոտենցիալ ունեն Գառնի-Ելփինի և երևանյան հյուսիս-արևմտյան ուղղության բեկվածքները, ինչպես նաև նրանց նկատմամբ լայնակի ուղղության Ազատ-Սևանի բեկվածքը: Առավել վտանգավոր է Գառնիի սեյսմաակտիվ վրաշարժ-տեղաշարժ, հյուսիս-արևմտյան տարածման բեկվածքը, որի հատման հանգույցն Ազատ-Սևանի բեկվածքի հետ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Սեյսմիկ պաշտպանության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից որոշվել է որպես հնարավոր պայմանական երկրաշարժի էպիկենտրոն՝ 15 կմ խորությամբ և 7 մագնիտուդ ուժգնությամբ: Ինչպես Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի, այնպես էլ նրան հարակից տարածքները համարվում են Հայաստանի Հանրապետության ամենաբարձր աստիճանի սեյսմիկ ռիսկի գոտի, ինչը պայմանավորված է տարածաշրջանի բարձր պոտենցիալ ունեցող սեյսմիկ վտանգով և լայնածավալ կառուցապատվածությամբ ու համապատասխանաբար խիտ բնակեցվածությամբ:

39. Հնարավոր իրադրության բնութագիրը՝

1) Համաձայն Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության տվյալների՝ Հայաստանի Հանրապետությունում երկրաշարժների առավել հավանական էպիկենտրոններ են համարվում՝

ա. Գառնի՝ λ =44^0 80 ′ , φ =40^{0}10 ′ , M=7.0, H=15 կմ (10-11 բալ),

բ. Զանգեզուր՝ $\lambda = 46^0 00'$, $\varphi = 39^0 20'$, M=6.3, H=22 կմ (8-9 բալ),

գ. Փարաքար՝ $\lambda = 44^0 43'$, $\varphi = 40^0 13'$, M=5.0, H=10 կմ (7 բալ).

2) հաշվի առնելով այն հանգամանքը, որ հնարավոր էպիկենտրոններից առավել մեծ վնաս կհասցվի Գառնիի երկրաշարժի դեպքում (10-11 բալ), սույն պլանում հնարավոր իրադրության գնահատականը տրված է ըստ այդ տվյալների: Նշված օջախի նկատմամբ բնակավայրերի հեռավորությունից կախված՝ նրանց տարածքները կենթարկվեն տարբեր ուժգնության ցնցումների.

3) առավել ծանր իրավիճակ կստեղծվի Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքում, որտեղ կենտրոնացված է հանրապետության բնակչության, հրդեհապայթյունավտանգ (պայթյունավտանգ՝ 78, հրդեհապայթյունավտանգ՝ 155, հրդեհավտանգ՝ 241 ու քիմիական վտանգավոր 13 օբյեկտների զգալի մասը: Հնարավոր ուժեղ երկրաշարժի հետևանքով, որպես երկրորդային խոցման օջախներ, կարող են վթարվել Հայաստանի Հանրապետության Արարատի, Կոտայքի, մարզերի և Երևան քաղաքի հիդրոտեխնիկական կառույցների պատվարները, որի հետևանքով բազմաթիվ բնակավայրեր կհայտնվեն ջրածածկման գոտում, ինչպես նաև՝ քիմիական վտանգավոր օբյեկտների վթարները.

4) երկրաշարժի հետևանքով հնարավոր են բազմաթիվ երկրորդական վտանգավոր երևույթներ՝ փլուզումների, սողանքների, սելավների տեսքով, որոնք իրենց հերթին կստեղծեն լրացուցիչ բազմաթիվ խոցող գործոններ: Կավերվեն և կվնասվեն ճանապարհային շինություններն ու կառույցները, կխցանվեն ավտոմայրուղիները.

5) հատկապես բարդ իրադրություն կստեղծվի Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Կաքավաբերդ համայնքում, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի՝ Գեղարդ, Գողթ, Սարանիստ, Կամարիս, Կաթնաղբյուր, Արամուս, Գեղաշեն Մայակովսկի, Ողջաբերդ, Գեղադիր, Գառնի և Աբովյան համայնքներում, Ակունք համայնքի Հատիս, Զովաշեն, Զառ, Կապուտան, Կոտայք, Նոր գյուղ և Սևաբերդ բնակավայրերում, Ջրվեժ համայնքի Զովք և Ձորաղբյուր բնակավայրերում, Բյուրեղավան համայնքի Ջրաբեր բնակավայրում, Չարենցավան համայնքի Ֆանտան բնակավայրում, որտեղ Երկրի մակերեսին առաջացած ճեղքերի լայնությունը կհասնի մինչև մեկ մետրի: Կավերվի նույնիսկ լավ կառուցված փայտե և քարե տների մեծ մասը, կձևախախտվեն երկաթգծի ռելսերը.

6) համաձայն MSK-64 սանդղակի (M 5-7՝ ըստ Ռիխտերի սանդղակի)՝ Գառնիի աղետալի երկրաշարժի 7-բալանոց գոտում հատուկ նախագծով կառուցված շենքերում վնասվածքները համեմատաբար քիչ կլինեն, տիպային լավ կառույցներում՝ թույլից չափավոր, վատ

նախագծված կամ վատ կառուցված շինություններում՝ զգալի: Կարող են շարքից դուրս գալ որոշ շենքերի ծխնելույզները: Համաձայն MSK-64 սանդղակի (M 5-7՝ ըստ Ռիխտերի սանդղակի)՝ Գառնիի աղետալի երկրաշարժի 8-բալանոց գոտում հատուկ նախագծով կառուցված շենքերում վնասվածքները թեթև կլինեն, տիպային կառույցներում՝ նշանակալի, վատ կառույցներում տեղի կունենան ավերածություններ: Կթեքվեն և կընկնեն վառարանային և գործարանային ծխնելույզները, սյուները և հուշարձանները: Հորատանցքերում և ջրհորներում կփոխվեն ջրի մակարդակները: Երկրի մակերեսի վրա կառաջանան ճեղքեր.

7) համաձայն MSK-64 սանդղակի (M 5-7՝ ըստ Ռիխտերի սանդղակի)՝ Գառնիի աղետալի երկրաշարժի 9-բալանոց գոտում հատուկ նախագծով կառուցված շենքերում կլինեն լուրջ վնասվածքներ, մյուսներում կնկատվեն զանգվածային փլուզումներ: Երկրի մակերեսին կառաջանան բազմաթիվ ճեղքեր.

8) հնարավոր իրադրության գնահատումը 8-բալանոց գոտում. այս գոտում կհայտնվի Հայաստանի Հանրապետության տարածքի 306 բնակավայր, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Լոռու, Տավուշի, Կոտայքի մարզերը, և Երևան քաղաքը: Երկրաշարժի առավել վնասված գոտում (8-10 բալ) կհայտնվեն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի 65 բնակավայր, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի 26 բնակավայր, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի մեկ բնակավայր և Երևան քաղաքը.

9) հնարավոր իրադրության գնահատումը 7-բալանոց գոտում. այս գոտում կհայտնվեն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի 8 բնակավայր, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի 70 բնակավայր, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի 14 բնակավայր, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի 42 բնակավայր, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի 25 բնակավայր, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի 5 բնակավայր.

10) ավերիչ երկրաշարժի ազդեցության գոտում կհայտնվեն 190084 շենքեր և շինություններ (քաղաք Երևանում՝ 34845), որոնցում բնակվում է 1905468 մարդ (քաղաք Երևանում՝ 1107800): Բնակչության շրջանում ընդհանուր կորուստները կկազմեն 363707 մարդ (քաղաք Երևանում՝ 282455), որոնցից անվերադարձ՝ 208914 մարդ (քաղաք Երևանում՝ 162243), սանիտարական՝ 154793 մարդ (քաղաք Երևանում՝ 120212), այդ թվում՝ ծանր վիրավորներ՝ 77983 մարդ (քաղաք Երևանում՝ 60562), միջին ծանրության վիրավորներ՝ 41834 մարդ (քաղաք Երևանում՝ 32488) և թեթև վիրավորներ՝ 34976 մարդ (քաղաք Երևանում՝ 27162).

11) երկրաշարժի հետևանքով կստեղծվի հետևյալ ինժեներական իրավիճակը՝ վնասված շենքեր՝ 157770 հատ (քաղաք Երևանում՝ 29208), որոնցից 1-ին կարգ՝ թեթև վնասվածք կստանա 1421 շինություն (քաղաք Երևանում՝ 263), 2-րդ կարգ՝ միջին վնասվածք կստանա 12850 շինություն (քաղաք Երևանում՝ 2379), 3-րդ կարգ՝ ծանր վնասվածք կստանա 13131 շինություն (քաղաք Երևանում՝ 2431), 4-րդ կարգ՝ մասամբ կքանդվի 47745 շինություն (քաղաք Երևանում՝ 8839), 5-րդ կարգ՝ լրիվ կփլվի 82623 շինություն (քաղաք Երևանում՝ 15296). խոշոր հրդեհներ՝ 151 հատ (քաղաք Երևանում՝ 28). խոշոր վթարներ կոմունալ - էներգետիկ ցանցում՝ 605 հատ (քաղաք Երևանում՝ 112). փլվածքներով փակված փողոցներ՝ 1124 կմ (քաղաք Երևանում՝ 208), փլատակների մակերեսը կկազմի 2307437 քառ. մ (քաղաք Երևանում՝ 347937), իսկ ծավալը՝ 204804629 խոր. մ (քաղաք Երևանում՝ 37915600).

12) փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման համար կպահանջվեն 36371 ձեռքով աշխատող փրկարարական խմբեր՝ 254597 մարդուց բաղկացած անձնակազմով (քաղաք Երևանում՝ 28246 կազմավորում՝ 197722 մարդուց բաղկացած անձնակազմով), 2182 մեխանիզացված փրկարարական խմբեր՝ 50186 մարդուց բաղկացած անձնակազմով (քաղաք Երևանում՝ 1695 կազմավորում՝ 38985 մարդուց բաղկացած անձնակազմով), 774 սանիտարական խմբեր՝ 4644 մարդուց բաղկացած անձնակազմով (քաղաք Երևանում՝ 601 կազմավորում՝ 3606 մարդուց բաղկացած անձնակազմով), 97 հրդեհաշիջման մարտական հաշվարկներ (քաղաք Երևանում՝ 56), 1455 վթարավերականգնողական խմբեր (քաղաք Երևանում՝ 1130), 2910 հասարակական կարգի պահպանման ջոկեր (քաղաք Երևանում՝ 2260): Անհրաժեշտություն կլինի ընդհանուր թվով 7274 միավոր (մղան, էքսկավատոր, ավտոկռունկ) ինժեներական տեխնիկայի (քաղաք Երևանում՝ 5649 միավոր), 4728 միավոր ինքնաթափերի (քաղաք Երևանում՝ 3672 միավոր), 2182 միավոր կոմպրեսորային կայանների (քաղաք Երևանում՝ 1695 միավոր), 2546 միավոր էլեկտրակայանների (քաղաք Երևանում՝ 1977 միավոր): Փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ կլինի 43789 կազմավորում՝ 342019 մարդուց բաղկացած անձնակազմով, 16730 ինժեներական և հատուկ տեխնիկա, այդ թվում՝ Երևան քաղաքում՝ 33988 կազմավորում՝ 265509 մարդուց բաղկացած անձնակազմով, 12993 միավոր ինժեներական և հատուկ տեխնիկա:

VIII. ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԾԱԳՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

40. Կառավարման կազմակերպումը՝

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետը, ստանալով Երևան քաղաքում ուժեղ երկրաշարժի մասին հաղորդագրությունը, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի կրտսեր հրահանգչի միջոցով կազմակերպում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ղեկավար կազմի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի արտակարգ իրավիճակների և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության տարահանման հանձնաժողովների անձնակազմերի ազդարարումը: Պլանում ընդգրկված մարմինների ղեկավարներն իրենց հերթին կազմակերպում են ենթակա անձնակազմի ազդարարումը և հավաքը, ստեղծում օպերատիվ խմբեր և կազմակերպում դրանց աշխատանքը: Ազդարարման համակարգի խափանման դեպքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ղեկավար կազմի ազդարարումն իրականացվում է սուրհանդակների, իսկ տուժած բնակչության իրազեկումը և վարվելակերպի մասին կանոնները՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության Շիրակի մարզային վարչության շարժական ուժերով ու միջոցներով: Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետը մարզային ճգնաժամային կառավարման կենտրոնից կապ է հաստատում Երևան քաղաքի հետ, ճշտում է ստեղծված իրավիճակը և պետական կառավարման մարմինների հնարավորությունները՝ ծավալելու Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների հանրապետական հանձնաժողով և կառավարելու աղետի հետևանքների վերացման գործընթացը: Եթե կառավարումը հնարավոր չէ իրականացնել, ապա Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանը ժամանակավորապես ստանձնում է երկրաշարժի հետևանքների վերացման աշխատանքների կառավարումը, իսկ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության պարտականությունները՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետը: Գործում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման հանձնաժողովը, որի նախագահն է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետը: Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման հանձնաժողովն սկսում է աղետի հետևանքների վերացման գործընթացը՝ մինչև

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների հանրապետական հանձնաժողովի վերականգնումը.

1) ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումները նախապես՝ մինչև արտակարգ իրավիճակների մարզային հանձնաժողովի նիստի գումարումը, կազմակերպում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչությունը՝ իր ստորաբաժանումների ուժերով, ընդգրկելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Շիրակի զինվորական կայազորի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի առողջապահության վարչության, Հայաստանի Հանրապետության ոստիկանության Շիրակի մարզային վարչության, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ուժերը և միջոցները.

2) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետը, ստանալով ուժեղ երկրաշարժի մասին հաղորդագրությունը, ծավալում է իր և աղետի հետևանքների վերացման կառավարման կենտրոնները, կապ է հաստատում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Շիրակի զինվորական կայազորի և Հայաստանի Հանրապետության ոստիկանության Շիրակի մարզային վարչության օպերատիվ հերթապահների միջև: Նշված կառավարման կետերից իրականացվում է փրկարարական աշխատանքների անմիջական կառավարումը.

3) փրկարարական աշխատանքների տեղամասերի ղեկավարները նշանակվում են Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության անձնակազմից, ովքեր ենթարկվում են Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետին, իսկ արտակարգ իրավիճակների մարզային հանձնաժողովի աշխատանքներն սկսվելու պահից՝ հանձնաժողովին.

4) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի հերթապահ ուժերի ղեկավարից ուժեղ երկրաշարժի մասին ազդարարվելուց հետո պլանում ընդգրկված մարմինների ղեկավարները ժամանում են Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության կողմից ծավալված աղետի հետևանքների վերացման կառավարման կենտրոն և սկսում են աշխատանքը: Գործում է

արտակարգ իրավիճակների մարզային հանձնաժողով, որի նախագահն է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետը, տեղակալը՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետը, անդամները՝ պլանում ներգրավված պետական կառավարման տարածքային մարմինների ղեկավարները.

5) հանձնաժողովը ղեկավարում է բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման ամբողջ գործընթացը.

6) օպերատիվ կառավարման նպատակով՝ մինչև հանձնաժողովի գործունեության ծավալումը պլանում ներգրավված մարմինների կազմից մեկական լիազորված անձ գործուղվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոն.

7) գործում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության տարահանման հանձնաժողովը, որի նախագահն է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալը: Տարահանման հանձնաժողովը ղեկավարում է Հայաստանի Հանրապետության տարածքում ուժեղ երկրաշարժի դեպքում բոլոր տարահանման միջոցառումները.

8) հանձնաժողովները կառավարումն իրականացնում են ստեղծված կառավարման կենտրոններից (կետերից), իսկ անհրաժեշտության դեպքում՝ պահեստային կամ շարժական կենտրոններից (կետերից).

9) արտակարգ իրավիճակների մարզային հանձնաժողովին կից ստեղծվում են՝

ա. նյութատեխնիկական միջոցներով և սննդամթերքով ապահովող խմբեր,

բ. միջազգային մարդասիրական օգնությունն ընդունող-բաշխող խմբեր,

գ. վրանային ավանների ծավալման երկու խումբ (մեկական խումբ՝ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի և Գեղարքունիքի մարզերից):

41. Կապի կազմակերպումը՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի և արտակարգ իրավիճակների մարզային հանձնաժողովի կառավարման կետերի միջև կապը կազմակերպվում է ներքին ավտոմատ հեռախոսակայանի միջոցով: Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի և արտակարգ իրավիճակների մարզային հանձնաժողովի կառավարման կենտրոնից քաղաքային ու միջքաղաքային հեռախոսակապի միջոցով կապ է կազմակերպվում Հայաստանի Հանրապետության մարզպետների, Երևանի քաղաքապետի, Հայաստանի

Հանրապետության արտակարգ իրավիճակների հանրապետական հանձնաժողովի ղեկավարի պահեստային կառավարման կետերի հետ: Կարճալիք N 1 ռադիոցանցի միջոցով կապ է կազմակերպվում Հայաստանի Հանրապետության վարչապետի կառավարման կետի և Հայաստանի Հանրապետության մարզպետների, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի շարժական կառավարման կետերի հետ: Նույն ռադիոցանցում Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության կառավարման կետը կապ է կազմակերպում Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի և փրկարար ծառայության տնօրենի շարժական կառավարման կետերի հետ (հնարավորության դեպքում).

2) կառավարման կետերի միջև կապը կազմակերպվում է գերկարճալիք N 1 ռադիոցանցով.

3) գերկարճալիք N 7 ռադիոցանցով կապը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների հանրապետական հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության պետական կառավարման տարածքային մարմինների (հնարավորության դեպքում) և միջազգային փրկարարական ուժերի կառավարման կետերի միջև.

4) գերկարճալիք N 2 ռադիոցանցով կապը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության, ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի ու փրկարար ծառայության տնօրենի շարժական կառավարման կետերի միջև.

5) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության մարզային փրկարարական վարչությունների միջև կապը կազմակերպվում է կարճալիք N 2 ռադիոցանցով: Քաղաքային, միջքաղաքային, կապուղիների և ուղիղ հեռախոսակապով կապը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության մարզային փրկարարական վարչությունների, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Սեյսմիկ պաշտպանության տարածքային

ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության հերթապահ մասի, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության գլխավոր շտաբի կապի հանգույցի, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հակաօդային պաշտպանության և ավիացիայի միացյալ հրամանատարական կետի, Հայկական ատոմային էլեկտրակայանի դիսպետչերական կետի միջև:

6) կարճալիք N 3 և գերկարճալիք N 3 ռադիոցանցերով Հայաստանի Հանրապետության մարզերի մշտական գործող հանձնաժողովների, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության մարզային փրկարարական վարչությունների, Հայաստանի Հանրապետության մարզերի փրկարարական աշխատանքների տեղամասերի ղեկավարների և հասարակական փրկարարական ուժերի միջև կապ է կազմակերպում: Գերկարճալիք N 4 ռադիոցանցերով կապը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության մարզերի մշտական գործող հանձնաժողովների, Հայաստանի Հանրապետության մարզերի բնակչության տարահանման հանձնաժողովների, Հայաստանի Հանրապետության մարզերի կազմակերպությունների արտակարգ իրավիճակների հանձնաժողովների և Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքային արտակարգ իրավիճակների հանձնաժողովների միջև: Մարզային կառավարման կետերի միջև կապը կազմակերպվում է նաև քաղաքային և միջքաղաքային հեռախոսակապի միջոցով:

42. Երկրաշարժի գոտում հետախուզության կազմակերպումը՝

1) հետախուզության անմիջական կազմակերպիչն է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետը.

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի համայնքների ղեկավարները կազմակերպում են հատուկ հետախուզություն՝ ելնելով բնակչության պաշտպանության համակարգի ընդհանուր խնդիրներից, ինչպես նաև՝ իրենց շահերից.

3) հետախուզության նպատակը, հիմնական ուղղությունները, ներգրավվող ուժերն ու միջոցները որոշում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետը.

4) հետախուզությունը ղեկավարում է, Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում հետախուզության ընդհանուր համակարգումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության

Շիրակի մարզային փրկարարական վարչությունը, օդային հետախուզությունը ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ներկայացուցչի միջոցով.

5) հատուկ հետախուզության անմիջական ղեկավարումն իրականացնում են պետական կառավարման տարածքային մարմինների ղեկավարները.

6) ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի հիմնարկների ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչությունը: Համակարգի անմիջական ղեկավարումը, ըստ գործառույթների, իրականացնում են համապատասխան նախարարությունների և գերատեսչությունների տարածքային ստորաբաժանումների պետերը.

7) Հետախուզությունը ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնից.

8) հետախուզություն իրականացնող բոլոր ուժերի փոխգործողությունները կազմակերպվում են՝ ըստ խնդիրների, ուղղությունների, օբյեկտների, ժամանակի և գործողությունների տեսակների: Հետախուզական ուժերի համագործակցությունը իրականացվում է՝ համաձայն նախապես մշակված փոխգործողությունների պլանի.

9) իրադրության վերաբերյալ ձեռք բերված տվյալները վերլուծվում և զեկուցվում են համապատասխան ղեկավարներին՝ համաձայն կառավարման սխեմայի.

10) հետախուզական տվյալները զեկուցում են կապի միջոցներով, ինչպես նաև նախապես մշակված զեկույցների հաշվետախտակի համաձայն.

11) հետախուզության այն տվյալները, որոնք պահանջում են շտապ որոշման ընդունում, զեկուցվում են անմիջապես.

12) հետախուզական ուժերը պատրաստականության են բերվում Ժ +1.30.

13) հետախուզական ուժերի կազմի մեջ մտնում են՝

ա. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության ճառագայթային, քիմիական, կենսաբանական իրավիճակների արձագանքման խումբը,

բ. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության հրշեջ փրկարարական ջոկատների հետախուզական խմբերը,

գ. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համապատասխան բանակային կորպուսի օդային, քիմիական և ճառագայթային ուժերը,

դ. ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի հիմնարկները, որոնք ներառում են մարզային և համայնքային մակարդակները:

43. Բնակչության՝ կացարաններով ապահովումը և տարահանման կազմակերպումը՝

1) ուժեղ երկրաշարժի դեպքում, ելնելով երկրաշարժի ուժգնությունից և հիմք ընդունելով ավերվածությունների և մարդկային կորուստների հաշվարկները, Երևան քաղաքի 1107800 բնակչությունից հնարավոր է անվերադարձ կորուստներ՝ 162242 մարդ, և սանիտարական կորուստներ՝ 120212 մարդ.

2) նկատի ունենալով այն հանգամանքը, որ հնարավոր է բնակելի շենքերի, առանձնատների, կառույցների ու շինությունների հիմնական մասի լրիվ կամ մասնակի ավերում, Երևան քաղաքում 825346 մարդ կմնա անօթևան: Անօթևան մնացած բնակչությունը կացարաններով ապահովվում է հետևյալ ձևերով՝

ա. ապակենտրոնացված տեղաբաշխում,

բ. տեղավորում ճամբարներում,

գ. կոլեկտիվ տեղավորում.

3) Երևան քաղաքի անօթևան բնակչության՝ կացարաններով ապահովումը և տարահանումը կազմակերպվում են ըստ վարչական տարածքների: Յուրաքանչյուր վարչական տարածքում բնակչության պաշտպանության համակարգման կենտրոններին կից ստեղծվում են բնակչության տարահանման միջանկյալ հավաքակայաններ, որտեղից բնակչությունը տեղափոխվում է ընդունող բնակավայր.

4) Երևան քաղաքի Կենտրոն համայնքի անօթևան մնացած թվով 96621 բնակչից՝ 20000-ը տեղավորվում են թվով 6 վրանային ճամբարներում, իսկ թվով 76621 բնակիչ տարահանվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաք, տարահանման միջանկյալ հավաքակայանն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Ծովակալ Իսակովի փողոց, Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատան դիմացի «Դալմայի այգիներ»-ը.

5) բնակչության տարահանման երթուղին է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Ծովակալ Իսակովի փողոց–Արգավանդի խաչմերուկ- Մասիս կայարան, անհրաժեշտ տրանսպորտային միջոցների թիվը՝ 5100 միկրոավտոբուս, 1500 վագոն:

IX. ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՎԹԱՐԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

44. Փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների անցկացման վերաբերյալ որոշման ընդունման, ուժերի նախապատրաստման և կիրառման կարգը հետևյալն է՝

1) երկրաշարժի գոտու հետախուզական տվյալները հավաքվում և վերլուծվում են Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության աշխատանքային խմբում՝ պետական կառավարման տարածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների մասնակցությամբ.

2) վերլուծության արդյունքում որոշվում են՝

ա. երկրաշարժի հետևանքների ծավալները,

բ. փրկարարական աշխատանքների բնույթը, ծավալը և անցկացման հաջորդականությունը,

գ. ուժեղ ներգործող թունավոր նյութեր օգտագործող կազմակերպությունների (օբյեկտների) վթարի բնույթը, ծավալները, ինչպես նաև թունավոր նյութերի հնարավոր ազդեցությունը փրկարարական ուժերի գործողությունների վրա.

դ. Հայաստանի Հանրապետության մարզերի, Երևան քաղաքի փրկարարական ուժերի կազմը, վիճակն ու փրկարարական աշխատանքների կատարման հնարավորությունը և այդ նպատակով մարզերի վթարավերականգնողական ուժերի ու բնակչության ներգրավման անհրաժեշտությունը,

ե. միջազգային օգնության կարգով հատկացվող ուժերի ու միջոցների օգտագործման անհրաժեշտությունը, քանակը և ներգրավման վայրը,

զ. տեղանքի բնույթը, ճանապարհների վիճակը, տարվա օրվա ժամանակն ու եղանակը և այդ գործոնների ազդեցությունն ուժերի գործողությունների վրա,

է. աղետի գոտի ուժերի մուտքի առավել նպատակահարմար ուղղությունները,

ը. աշխատանքների կատարման եղանակները և անվտանգությունն ապահովող միջոցները.

3) ելնելով իրադրության գնահատման եզրակացություններից՝ երկրաշարժի հետևանքների վերացման Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովի նախագահն ընդունում է որոշում՝ աղետի գոտում որոնողափրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքների իրականացման վերաբերյալ, ըստ որի աղետի գոտու

համար նշվում են՝

ա. երկրաշարժի տարածքը և հետևանքները,

բ. փրկարարական աշխատանքների իրականացման համար ներգրավվող ուժերն ու միջոցները և նրանց խնդիրները,

գ. աշխատանքների կատարման անվտանգության միջոցառումները,

դ. աղետի գոտու տուժածների և բնակչության տարահանման երթուղիները,

ե. ներգրավված ուժերի համագործակցության կարգը և գործողություններն ապահովող միջոցառումները,

զ. պահեստային ուժերի և միջոցների կազմն ու տեղաբաշխումը,

է. փրկարարական աշխատանքների համակողմանի ապահովման կարգը,

ը. կառավարման կազմակերպման կարգը.

4) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման հանձնաժողովի նախագահը փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքների իրականացման նպատակով կառավարման մարմինների և փրկարարական ուժերի ղեկավարներին տալիս է առաջադրանքներ՝ անձամբ կամ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության միջոցով, բոլոր դեպքերում Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչությունը այդ առաջադրանքները ձևակերպում է որպես հրաման կամ կարգադրություն: Փրկարարական ուժերի համար (նաև՝ միջազգային) երկրաշարժի գոտուց դուրս նշանակվում են հավաքման վայրեր, և ապահովվում են արագ ու հարմար ելքեր դեպի աշխատանքային տեղամասեր: Հավաքման վայրերի կոնկրետ տեղերը որոշվում են հետախուզության տվյալների հիման վրա:

X. ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՎԹԱՐԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

45. Հայաստանի Հանրապետության փրկարարական, վթարավերականգնողական, հասարակական փրկարարական խմբերի և բնակչության բազայի հիման վրա կազմվում է ուժերի խմբավորում, որը նախատեսված է փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքներ իրականացնելու համար: Աղետի գոտում փրկարարական աշխատանքներ իրականացնող ուժերն ու միջոցները կազմված են՝

1) առաջին էշելոնից, որը նախատեսված է իրավիճակը բացահայտելու, գնահատելու, փրկարարական աշխատանքներ սկսելու և հետագայում ժամանող ուժերի ներգրավումն ապահովելու համար:

Ընդգրկում են՝

ա. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության ստորաբաժանումների 2/3-ը (մնացած ուժերը մնում են հիմնական տեղակայման վայրերում՝ ամենօրյա խնդիրների լուծման համար),

բ. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և Հայաստանի Հանրապետության ոստիկանության ու Հայաստանի Հանրապետության մարզերի ուժերը.

2) երկրորդ էշելոնից, որը նախատեսված է փրկարարական աշխատանքների ծավալը կտրուկ ընդլայնելու համար:

Ընդգրկում է՝

Հայաստանի Հանրապետության մարզերի մշտական պատրաստականության ուժերը՝ յուրաքանչյուր մարզի փրկարարական համալիր ջոկատը և վթարավերականգնողական խմբերը.

3) երրորդ էշելոնից կամ պահուստից, որը նախատեսված է անսպասելի ծագող խնդիրների լուծման համար:

Ընդգրկում է՝

երկրորդ էշելոնում չընդգրկված մարզային և համայնքային ուժերը, հասարակական փրկարարական խմբերը և ներգրավված բնակչությանը: Փրկարարական աշխատանքների իրականացման նպատակով ուժերի և միջոցների ստեղծման ժամանակ պահպանվում են նրանց չմասնատելու սկզբունքները՝ գլխավոր խնդրի իրականացման համար, հաշվի առնելով բնակավայրերի ավերվածության աստիճանը և նրանցում բնակչության թիվը (խտությունը): Ուժերի տեղակայման վայր ընտրելիս՝ հաշվի են առնվում հիգիենիկ-համաճարակային իրավիճակը, գերակշռող քամիների ուղղությունը, ճանապարհների առկայությունը երկրաշարժից ավերված գոտիներում (հատվածներում), փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքներ իրականացնելիս՝ ուժերի և միջոցների կենտրոնացված ղեկավարությունն իրագործելու հնարավորությունները, նյութատեխնիկական ապահովումը, ուժերի և միջոցների ուղարկումն առաջին հերթին խիտ բնակեցված հատվածներ՝ փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքներ կատարելու համար:

46. Ինժեներական ապահովումը միջոցառումների համակարգ է՝ ուղղված բնակչության պաշտպանությանը, փրկարարական ուժերի և միջոցների առաջանցման հիմնական և

շրջանցիկ ուղիների ապահովմանը, երկրաշարժի հետևանքով ավերված տարածքներում փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպմանն ու իրականացմանը: Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքում երկրաշարժի հետևանքների վերացման աշխատանքների ինժեներական ապահովման կազմակերպման համար պատասխանատու է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժինը:

1) երկրաշարժի հետևանքների վերացման ինժեներական ապահովումն իրականացվում է տարածքի շինարարական կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) ուժերով և միջոցներով: Տուժած բնակչության՝ անվտանգ տարածքներ տարահանումը տեխնիկայի միջոցով հաշվարկն իրականացվում է՝ ելնելով իրավիճակից և երթուղիների անցանելիությունից՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի «Վտանգավոր տարածքից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման կարգը հաստատելու մասին» N 1180-Ն որոշման: Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչությունը համակարգում է ինժեներական աշխատանքները, որոնք առնչվում են ինժեներական ապահովման խնդիրներին և վերահսկում են դրանց իրականացման ընթացքը՝ ըստ կատարման ժամկետների:

47. Բժշկական ապահովման իրականացումը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության կողմից: Տարահանման միջոցառումների տրանսպորտային ապահովումը սանիտարական տրանսպորտով կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության կողմից, այլ տրանսպորտային միջոցներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժինի կողմից: Փրկարարական կազմավորումների բժշկական ապահովումը կիրականացվի երկրաշարժից տուժածներին բժշկական օգնություն ցուցաբերող բրիգադների ուժերով:

48. Հասարակական անվտանգության ապահովումն ընդգրկում է կազմակերպչական և ռեժիմային միջոցառումների համալիր, որն ուղղված է ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների հաջող իրականացմանը: Հասարակական անվտանգության ապահովումը կազմակերպվում է քաղաքներում և այլ բնակավայրերում, բնակչության տարահանման գոտիներում հասարակական կարգի պահպանության, փրկարար ուժերի մուտքի և

տարահանման երթուղիներում ճանապարհային երթևեկության անվտանգության միջոցառումների իրականացման նպատակով, ինչպես նաև՝ աղետի ժամանակ բնակչության կորուստների հաշվառման համար: Հասարակական կարգի ապահովումը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության տարածքային ստորաբաժանման կողմից՝ համապատասխան պլանով, որն անմիջապես դրվում է գործողության մեջ: Ուժեղ երկրաշարժի դեպքում, միջոցառումների իրականացման շահերից ելնելով, զինվորական հրամանատարության մարմինների հետ կազմակերպվում է սերտ համագործակցություն՝ հասարակական կարգի պահպանության, պարետային ծառայության, ինչպես նաև փրկարարական աշխատանքների կազմակերպման հարցերով:

49. Նյութատեխնիկական և սննդամթերքի ապահովումը ներառում է աղետի գոտու տուժած բնակչության և փրկարարական ուժերի կենսաապահովման համար սննդի և առաջին անհրաժեշտության միջոցների ժամանակին տեղափոխումը և բաշխումը: Նյութատեխնիկական և սննդամթերքի ապահովումն իրականացվում է համաձայն նախօրոք մշակված և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից հաստատված գործողությունների պլանի:

50. Տրանսպորտային ապահովումը կազմակերպում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժինը, ինչի համար անհրաժեշտ են հետևյալ տրանսպորտային միջոցները՝

1) մարդատար ավտոմեքենաներ (ավտոբուսներ, միկրոավտոբուսներ), որոնք նախատեսված են փրկարարական կազմավորումներ, համապատասխան մասնագետների խմբեր, միջազգային փրկարարական ուժեր և այլն տեղափոխելու, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում աղետի գոտի փոքրածավալ նյութատեխնիկական միջոցներ տեղափոխելու, իսկ աղետի գոտուց տուժած բնակչությանը տարահանելու համար.

2) բեռնատար ավտոմեքենաներ, որոնք նախատեսված են նյութատեխնիկական, ինչպես նաև առաջին անհրաժեշտության միջոցներ (սննդամթերք, հագուստ և հանդերձանք, վրաններ, անկողնային պարագաներ, ջեռուցման սարքեր, դեղամիջոցներ, տնտեսական իրեր և այլն) աղետի գոտի տեղափոխելու համար.

3) բեռնատար (նավթատար) և ջրատար ավտոմեքենաներ, որոնք նախատեսված են վառելիք և ջուր աղետի գոտի տեղափոխելու, ինչպես նաև գործող տրանսպորտային միջոցների լցավորումն ապահովելու համար.

4) ինժեներական (շինարարական) և հատուկ տեխնիկա, որը նախատեսված է աղետի գոտում համապատասխան աշխատանքներ իրականացնելու համար.

51. Երկրաշարժի գոտու և Հայաստանի Հանրապետության սեյսմիկ իրավիճակի հսկողությունը և իրավիճակի մասին տեղեկությունն ապահովում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Սեյսմիկ պաշտպանության Հարավային ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

Այդ նպատակով՝

1) Ժ+30 ճշտում է երկրաշարժի էպիկենտրոնի կոորդինատները, ուժգնությունն ու աղետի մասշտաբները և արդյունքների մասին անմիջապես զեկուցում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետին.

2) հսկողության տակ է վերցնում երկրաշարժի գոտու և Հայաստանի Հանրապետության տարածքի ընթացիկ սեյսմիկ իրավիճակը, ավերածությունների բնույթն ու մասշտաբները, բնակչության հոգեբանական վիճակը և պարբերաբար (օրական մեկ անգամ) տեղեկություններ է ներկայացնում երկրաշարժի հետևանքների վերացման հանձնաժողովին և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետին.

3) արագ արձագանքման ուժերի ստորաբաժանումների միջոցով կազմակերպում և էպիկենտրոնային գոտում իրականացնում է հատուկ մակրոսեյսմիկ երկրաբանական, սեյսմատեկտոնական, երկրաքիմիական սեյսմոլոգիական հետազոտություններ՝ էպիկենտրոնային գոտու ուրվագծման հետցնցումային ընթացքի ուսումնասիրման և ընթացիկ սեյսմիկ վտանգի գնահատման նպատակով.

4) փրկարարական և վերականգնողական աշխատանքների անվտանգ իրականացման համար իր արագ արձագանքման ուժերով ու սարքավորումներով կատարում է երկրաշարժի հետևանքով վնասված շենքերի և շինությունների սեյսմակայունության գնահատում.

5) պարբերաբար բնակչությանը տալիս է տեղեկություններ ստեղծված իրավիճակի մասին:

52. Երկրաշարժի դեպքում նյութական պաշարների և միջոցների առաջնահերթ օգտագործման կանոնները սահմանում է արտակարգ իրավիճակների հանձնաժողովը:

XI. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐ ՈՒԺԵՐԻ ԵՎ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ, ՍՏԱՑՄԱՆ ՈՒ ԲԱՇԽՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

53. Միջազգային փրկարար ուժերի և օգնության ընդունման, ստացման ու բաշխման միջոցառումները բաղկացած են՝

1) մարդասիրական օգնության ընդունումից.

2) մարդասիրական օգնության բաշխումից:

54. Մարդասիրական օգնությունը տրվում է արտակարգ իրավիճակների հանձնաժողովի միջոցով՝ տուժած տարածքների կողմից ներկայացված հայտերի հիման վրա, որոնք կազմվում են նախօրոք մշակված նորմերի հիման վրա՝ հաշվի առնելով կոնկրետ աղետի դեպքում տուժած բնակչության հետ կապված առանձնահատկությունները:

55. Միջազգային մարդասիրական օգնությունը տրվում է միջազգային կազմակերպությունների, առանձին պետությունների և առանձին անհատների կողմից:

56. Միջազգային մարդասիրական օգնությունը կարող է լինել հրատապ միանվագ օգնության ձևով և երկարաժամկետ ծրագրային ձևով: Հրատապ միանվագ մարդասիրական օգնությունն ստացվում է հանրապետությունում նման դեպքերում ստեղծվող հատուկ հանձնաժողովների կողմից և բաշխվում է պետական կառավարման տարածքային կամ տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով: Մարդասիրական օգնությունը կարող է ներկրվել ինչպես օդային, այնպես էլ վերգետնյա տրանսպորտային միջոցներով: Մարդասիրական օգնության ընդունման և բաշխման գործողություններն իրականացվում են համապատասխան հայտերի հիման վրա:

57. Միջազգային մարդասիրական օգնության ստացման օպերատիվությունն ապահովելու նպատակով այն նախօրոք պլանավորվում է՝

1) տուժածների համար սննդի, առաջին անհրաժեշտության առարկաների, վառելիքի նորմեր՝ 10 օրվա համար.

2) դեղորայքի և բժշկական սարքերի համար.

3) ժամանակավոր կացարանների անհրաժեշտ թվի համար:

58. Աղետի գոտում մարդասիրական օգնությունը կենտրոնացված ձևով հանձնվում է մարզպետարանում ստեղծված մարզային կամ համայնքային արտակարգ իրավիճակների հանձնաժողովներին կից ստեղծված մարդասիրական օգնության բաշխման խմբերին, որոնց ղեկավարում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության

փրկարար ծառայության ներկայացուցիչը: Այդ հանձնաժողովները, համապատասխան ցուցակների հիման վրա, մարդասիրական օգնությունը բաշխում են բնակչությանը:

59. Միջազգային մարդասիրական օգնությունը հաշվառվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության կողմից:

60. Միջազգային փրկարարական ուժերի ժամանման, փրկարարական աշխատանքների և փոխհամագործակցության կազմակերպման կարգը հետևյալն է՝

1) փրկարարական աշխատանքների իրականացման գործընթացում փոխգործողությունները կազմակերպվում են արտակարգ իրավիճակներում արագ արձագանքման ուժերի նպատակաուղղված օգտագործման և այդ ուժերի միջև գործողությունների հստակեցման նպատակով: Փոխգործողությունները կազմակերպվում և իրականացվում են ըստ վայրի և ժամանակի.

2) միջազգային ուժերի ներգրավումն իրականացվում է համաձայն հայտի, որը արտակարգ իրավիճակների հանձնաժողովը ներկայացնում է ժամանած միջազգային ուժերի կողմից ստեղծված շտաբ: Միջազգային ուժերի գործողությունների շտաբի հիմնումը, ինչպես նաև միջազգային ուժերի ընդունման կետերի հիմնումը սահմանագծերում և օդանավակայաններում իրականացնում են այդ աշխատանքների իրականացման համար նախատեսված միջազգային փորձագետների խմբերը: Եթե միջազգային փորձագետների խմբերը դեռևս չեն ժամանել, այդ պարտականություններն ստանձնում են առաջինը ժամանած միջազգային թիմերը.

3) միջազգային փրկարարական խմբերի գործողությունները համակարգում է միջազգային փորձագետների կողմից հիմնված շտաբը, ինչի մասին զեկույցներ է ներկայացնում արտակարգ իրավիճակների հանձնաժողովին.

4) միջազգային ուժերի անմիջական ղեկավարումն աշխատանքային տեղամասերում իրականացնում է աշխատանքային տեղամասի ղեկավարը:

ԲԱԺԻՆ 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱԶՄԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԷՊԻԿԵՆՏՐՈՆՈՎ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԴԵՊՔՈՒՄ

61. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետը ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի հերթապահ ուժերի ղեկավարից ստանալով Հայաստանի

Հանրապետության Սյունիքի մարզում տեղի ունեցած ուժեղ երկրաշարժի մասին հաղորդագրությունը, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի կրտսեր հրահանգչի միջոցով կազմակերպում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ղեկավար կազմի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային արտակարգ իրավիճակների հանձնաժողովի ազդարարումը և կապ է հաստատում ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի և Կապան քաղաքի հետ:

62. Պատրաստականության է բերվում մարզի մինչև 2 ժամ պատրաստականության ուժերն ու միջոցները:

63. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի կրտսեր հրահանգչի միջոցով կազմակերպվում է մարզի համայնքների, կազմակերպությունների ղեկավարների ազդարարումը:

64. Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի հետ ճշգրտվում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում երկրաշարժի հետևանքով ստեղծված իրավիճակը:

65. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության կողմից ճշգրտվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում առկա ինժեներական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկությունները:

66. Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի հետ ճշգրտվում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզ ուղարկվող անհրաժեշտ ուժերի և միջոցների քանակը, շարժման երթուղիները և փրկարարական աշխատանքների ծավալման տեղամասերը:

XII.ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ՃՇԳՐՏՈՒՄԸ

67. Պլանի ճշգրտման գործընթացը համակարգում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչությունը:

68. Վթարափրկարարական աշխատանքների պլանավորման կատարելագործումը պետք է նպատակաուղղված ձևով իրականացվի գնահատման մեթոդների, միջոցների և անհրաժեշտ բավարար պայմանների ճշգրտման ու անվտանգության բարձրացման կարգավորման, վերլուծական, իրավական, տնտեսական և կազմակերպչական հիմքերի մշակման հաշվին:

69. Կատարելագործման բազային հիմքեր պետք է ծառայեն հետևյալ աղբյուրները՝

1) բնակչության պաշտպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենքները և ենթաօրենսդրական ակտերը.

2) երկրաշարժերի թեմայով անցկացվող շտաբային, հրամանատարաշտաբային ուսումնավարժությունների արդյունքները.

3) տեղեկատվական տվյալների բազայի լրամշակումը, նոր հայտնաբերված վտանգավոր գործընթացների, շենքերի և շինությունների (այդ թվում՝ նաև նոր կառուցվող), կենսաապահովման գծերի վիճակի տեխնիկական պլանային գերատեսչական գնահատումը»:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ

Հավելված № 2
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2019 թվականի նոյեմբերի 01-ի №550-Ա որոշման
«Հավելված № 18
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2016 թվականի հունիսի 3-ի № 172-Ա որոշման

ՀԱՇՎԱՐԿ
ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ

Հ/Հ	Բնակավայրի անվանումը	Էքսկավատոր	Մղան			Ավտոկռունկ			Ինքնաթափ			Կոմպրեսոր			Այլ տեխնիկա		
1.	Հայաստանի Հանրապետության Երևան քաղաք	92	88				260			520	375			177			381
2.	Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզ	18	18				22			38	2			2			0
3.	Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ	55	60				55			95	47			22			43
4.	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ	12	12				8			18	2			1			1
5.	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ	53	62				78			138	53			21			56
6.	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ	68	72				83			153	45			36			68
7.	Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ	64	72				98			178	64			30			64
8.	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ	51	52				45			114	4			3			0
9.	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզ	68	72				108			193	69			8			42
10.	Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզ	24	24				43			89	34			20			3
11.	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզ	65	80				103			190	110			17			69
	Ընդամենը	570	612				903			1726	805			337			727

ՀԱՇՎԱՐԿ
ԲԺՇԿԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ

Հայաստանի Հանրապետության մարզերի անվանումը	Աղետների բժշկության կազմավորումների և անձնակազմերի թիվը՝ ըստ մասնագիտական ուղղությունների																						
	Հրատապ բժշկական օգնության բրիգադ (գծային)																						
	Հրատապ բժշկական օգնության բրիգադ	Հրատապ բժշկական օգնության բրիգադ՝ հատուկ	բժշկական	բուժական	Վիրաբուժական	Դեղաբուժական	Ընդհանուր բուժական	Ընդհանուր վիրաբուժական	Ընդհանուր թերապևտիկ	Մանկաբուժական	Ընդհանուր մանկաբուժական	Հոգեբուժական	Ընդհանուր հոգեբուժական	Ընդհանուր նեյրոբուժական	Ընդհանուր ոսկրաբուժական	Ընդհանուր ուռուցքաբանական	Ընդհանուր ինֆեկցիոնիստական	Ընդհանուր ֆտիզիատրական	Ընդհանուր ուրոլոգական	Ընդհանուր ֆիզիոթերապևտիկական	Ընդհանուր անդրադարձաբանական	Ընդհանուր ատամնաբուժական	Ընդհանուր ակնաբուժական	Ընդհանուր ունկնաբանական
Արագածոտնի	13 52	7 35	5 15	3 9	4 24		1 18	1 14	1 6	5 40		2 10	1 6	1 4		3 12		2 8	4 12	5 20	8 48	4 12	4 16	4 16
Արմավիրի	14 64	17 89	4 28	1 16	4 29		3 21	1 8	1 6	2 12		1 6	1 6							3 16	7 38	1 5	7 16	4 27
Արարատի	23 69	13 39	5 15	7 21	5 60		2 20			4 28			3 21	2 8				2 8	1 3	7 28	9 45			
Գեղարքունիքի	45 180	44 174	6 24	6 18						5 25											10 30			
Կոտայքի	32 96	25 75	17 51	13 39	5 25		3 15		1 5	4 16			2 10					5 15	4 16	4 20	4 32		4 28	4 16
Շիրակի	36 144	35 175	15 60	3 12	10 90	1 10	2 20		2 4	4 32	2 18	3 15	3 21	1 6		2 10	3 15	2 6	1 11	9 36	12 72			7 28
Լոռու	45 135	44 176	9 27	10 30	5 40		2 20		1 14	6 48	1 7	4 20	4 28	1 5		1 6	1 6			7 28	5 30		6 43	10 75
Սյունիքի	4 12	7 26	6 21	6 21	4 15		3 11	1 2	1 2	2 8	1 5	1 4	1 4	2 7			2 7	3 10		4 14	3 11		3 16	1 2
Վայոց ձորի	18 54	14 42	5 15		2 21				2 17	2 10			1 6											
Տավուշի	30 90	15 45	4 12	8 24	3 9		1 3		1 3	4 12		3 9	3 9	1 3						5 15	4 12			4 12
Երևանի	303 909	195 585	60 180	2 6	24 264	4 40	14 126	1 9	2 22	29 174	6 36	11 44	5 30	7 35	5 30	6 36	10 60	8 88	13 143	39 87	20 160	1 5	13 111	1 3
Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետությունում	563 1805	416 1461	136 448	59 196	66 577	5 50	31 254	4 33	12 79	67 405	10 66	25 108	24 141	15 68	5 30	12 64	16 88	22 135	23 185	83 264	82 478	6 22	37 230	35 179

ՀԱՇՎԱՐԿ
ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ՎԹԱՐԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ

Հ/Հ	Վարչատարածքային միավորի կամ կազմակերպության անվանումը	Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության տարածքային ստորաբաժանումներ (մարդ/տեխնիկա)	Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն Հայաստանի Հանրապետության ոստիկանություն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Փրկարարական կազմավորումներ (կազմեր/մարդ)	Փրկարարական կազմավորումներ տեխնիկա/հատուկ միջոց
	1. Մինչև 2 ժամ պատրաստականության				
1)	Հայաստանի Հանրապետության Երևան քաղաք	901/57	համաձայն առանձին փոխգործողության պլանների		
2)	«Նաիրիտ» գործարան» փակ բաժնետիրական ընկերության հատուկ հրշեջ ջոկատ	49/2			
3)	Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզ	174/13			
4)	Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ	167/10			
5)	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ	136/10			
6)	«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերություն	100/3			
7)	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ	212/13			
8)	Սևանի հատուկ ջրափրկարարական ջոկատ	37/4			7 լողամիջոց
9)	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ	293/22			
10)	Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ	172/11			
11)	«Հրազդանի ջերմաէլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության հատուկ հրշեջ ջոկատ	49/4			
12)	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ	299/25			
13)	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզ	239/17			
14)	Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզ	142/10			
15)	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզ	186/16			
	2. Մինչև 12 ժամ պատրաստականության				
1)	Հայաստանի Հանրապետության Երևան քաղաք		համաձայն առանձին փոխգործողության պլանների	1157/6739	217/16
2)	Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզ			835/4386	122/6
3)	Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ			1060/4735	400/2
4)	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ			1075/5112	426/2
5)	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ			678/3161	329/3

6)	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ				
7)	Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ			554/4669	212/1
8)	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ			599/3195	67/3
9)	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզ			1122/5284	374/3
10)	Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզ			754/3491	186/2
11)	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզ			359/1629	174/2
				643/2785	389/2
	3. 24 ժամ և ավելի պատրաստականության				
1)	Հասարակական փրկարարական ջոկատներ				
2)	Աղյուսակի 1-ին և 2-րդ մասերում չընդգրկված ուժեր				
3)	Համայնքային ուժեր				
4)	Միջազգային ուժեր				

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

Իսկականի հետ ճիշտ է

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ